

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2020Թ.**

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրատարակվել է 30 մարտի 2021թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ Սահմանադրության Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որն ունի միապալատ օրենսդիր կառույց՝ Ազգային ժողով (խորհրդարան): Կառավարությունը ղեկավարում է խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, իսկ նախագահը, որը նույնպես ընտրվում է խորհրդարանի կողմից, ունի առավելապես արարողակարգային դերակատարում: 2018թ. դեկտեմբերի արտահերթ խորհրդարանական ընտրություններում գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի ղեկավարած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների 70 տոկոսը և գերակշիռ մեծամասնություն խորհրդարանում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հովանու ներքո իրականացված միջազգային ընտրական դիտորդական առաքելության գնահատմամբ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ:

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔՕ) առանձին կառույց է, որն իրականացնում է նախաքննություն պետական պաշտոնյաների հնարավոր չարաշահումների հետ կապված քրեական գործերով: Քննչական կոմիտեն պատասխանատու է ընդհանուր քաղաքացիական և ռազմական քրեական գործերով նախաքննությունների համար և ներառում է քննչական ծառայություններ: Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության ղեկավարներն ուղղակիորեն հաշվետու են երկրի վարչապետին և նշանակվում են նախագահի կողմից՝ վարչապետի առաջադրմամբ: Կառավարությունը նշանակում է Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի ղեկավարներին՝ վարչապետի առաջադրմամբ: Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ

վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ: Անվտանգության ուժերի կողմից եղել են որոշ չարաշահումներ:

Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը տեղի ունեցած 44-օրյա ինտենսիվ մարտական գործողությունների ընթացքում, որին ներգրավված էին Հայաստանը, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականները և Ադրբեջանը, եղան նշանակալի զոհերի ու վայրագությունների մասին հաղորդումներ բոլոր կողմերից: Այն բանից հետո, երբ Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ վերականգնեց իր վերահսկողությունը 1994թ.-ից անջատողականների կողմից վերահսկվող հարակից 4 տարածքների նկատմամբ, նոյեմբերի 9-ին Հայաստանը և Ադրբեջանը, Ռուսաստանի միջնորդական ջանքերով, հայտարարեցին հրադադար, որի արդյունքում խաղաղ ճանապարհով Ադրբեջանի վերահսկողությանը փոխանցվեց ևս 3 տարածք և տարածաշրջանում տեղակայվեցին ռուս խաղաղապահներ: 1995թ. ի վեր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը միջազգային միջնորդական ջանքերի առարկա էր՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Մինսկի խմբի համանախագահների կողմից (Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Ռուսաստան): Հուլիսի 12-ից 16-ը զոհերի հանգեցրած բախումներ տեղի ունեցան նաև Հայաստանի և Ադրբեջանի միջազգային սահմանին՝ Տավուշի մոտ: Սեպտեմբերի 27-ի ռազմական գործողությունները սկսվելուն պես կառավարությունը հայտարարեց ռազմական դրություն, որի ներքո սահմանափակումներ կիրառվեցին ազատ արտահայտման, հանրահավաքներ անցկացնելու և ազատ տեղաշարժի իրավունքների նկատմամբ: Սահմանափակումները հանվեցին դեկտեմբերի 2-ին, իսկ տարեվերջի դրությամբ գործում էր միայն զորքերի մասնակի մոբիլիզացման պահանջը: (Տես՝ Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանի վերաբերող գլխի 1.a., 1.b., 1.c., 1.d., 5 և 6 բաժինները հակամարտության հետ կապված չարաշահումների վերաբերյալ):

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրները ներառել են խոշտանգումներ. կամայական կալանք, թեպետ 2019թ. համեմատ ավելի սակավ. ծանր և կյանքի համար վտանգավոր բանտային պայմաններ. նշանակալի խնդիրներ կապված դատական անկախության հետ. կամայական միջամտություն անձնական կյանքին. մարդկանց թրաֆիքինգ. բռնությամբ կամ բռնության սպառնալիքներով ուղեկցվող հանցանքներ ընդդեմ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց. և երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի օգտագործում: Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության հետ կապված մարդու իրավունքների խնդիրներն առնչվում են ապօրինի սպանություններին և քաղաքացիական զոհերին:

Կառավարությունը ձեռնարկել է քայլեր ներկա և նախկին պետական պաշտոնյաների և իրավապահ կառույցների պաշտոնյաների թույլ տված ենթադրյալ չարաշահումների քննության և նրանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Օրինակ՝ տարվա ընթացքում շարունակվել է քննվել 8 քաղաքացիական անձի և 2 ոստիկանի կյանք իսլաժ 2008թ. հետընտրական բախումներում նախկին կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հանցավորության հարցը:

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԱԲ

ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանություններ

Կառավարության կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանություն կատարելու վերաբերյալ որևէ հաղորդում չի եղել:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) շարունակել են մտահոգություններ հայտնել ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերի ու իրավապահների կողմից այդ դեպքերով վստահարժան քննություններ չապահովելու վերաբերյալ: Տարվա ընթացքում զինված ուժերի կազմում տեղի ունեցան լուրջ կադրային փոփոխություններ և որոշ դիտորդներ փաստում էին, որ այդ նշանակումներից ու հարցին հնչեղություն տալուց հետո նկատվել է բանակում գրանցվող ինքնասպանության դեպքերի կտրուկ նվազում:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու զոհերի ընտանիքների գնահատմամբ ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերն ի սկզբանե ինքնասպանության վարկածով քննելը քիչ հավանական էր դարձնում չարաշահումների բացահայտումն ու քննությունը: Ըստ մարդու իրավունքների հարցերով իրավաբանների բանակում գրանցված մահվան դեպքերի քննության ամենամեծ խոչընդոտն իրեղեն ապացույցների վերացնելն էր կամ չպահպանելը թե՛ զինվորական հրամանատարության կողմից (ծառայողական քննությունների դեպքում), թե՛ գործի քննությունն իրականացնող համապատասխան մարմինների կողմից: Բացի այդ, իրավապաշտպան ՀԿ-ները համաձայն չեն բանակում գրանցված մահվան ելքով դեպքերի մասին Գլխավոր դատախազության ու Պաշտպանության նախարարության կողմից ներկայացվող վիճակագրությանը՝ փաստելով, որ զինվորական ծառայության հետ կապված ու զինվորական ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերի տարանջատումը կատարվում է

կամայականորեն: Նրանք նաև քննադատում էին կառավարությանը ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի մասին արագ ու ամբողջական տեղեկություններ չտրամադրելու համար: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ը (ՀՔԱՎ) հայտնում էր, որ բանակում կատարված ինքնասպանությունների մասին հաղորդումների թիվը տարվա առաջին կեսին 2019թ. համեմատ կրկնապատկվել է:

Հունվարի 30-ին ենթադրաբար ինքնասպանություն գործած զորակոչիկ Վահրամ Ավագյանի ընտանիքի անդամներն ու ծանոթները փորձեցին փետրվարի 2-ին նրա դիակը բերել Երևան և փակեցին Երևան-Արմավիր ճանապարհը՝ բողոքելով քննչական մարմնի այն հայտարարության դեմ, որ Ավագյանի մահը եղել է ինքնասպանություն: Ազգականները գյուղ վերադարձան թաղում կատարելու միայն այն բանից հետո, երբ այն ժամանակվա պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը հավաստիացրեց, որ տեղի կունենա պատշաճ քննություն և մեղավորները կպատժվեն: Նույն օրը Քննչական կոմիտեն ծանր հետևանքների հանգեցրած կանոնակարգային խախտումների համար ձերբակալեց Ավագյանի երեք ծառայակիցների՝ Դավիթ Մովսիսյանին, Խաչիկ Գասպարյանին և Սպարտակ Ավետիսյանին:

Փետրվարի 12-ին ազգային ժողովում հարցուպատասխանի ժամանակ վարչապետ Փաշինյանը նկատեց, որ բանակում ծառայության հետ չկապված մահվան դեպքերը պայմանավորված են հասարակության մեջ գոյություն ունեցող քրեական ենթամշակույթով: Իրավապաշտպան ակտիվիստները սակայն պնդում էին, որ քրեական ենթամշակույթը, ինչի լայն տարածվածությունը բանակում նրանք ընդունում էին, ձևավորում էին ոչ թե զորակոչիկները, այլ ստեղծում ու պահպանում էին սպաներն ու հրամանատարները: Իրավապաշտպան ՀԿ-ները փաստում էին, որ նախքան սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը տեղի ունեցող մարտական գործողությունները նկատելի էին նյութական պայմանների, սննդի որակի ու հերթապահության վայրերի անվտանգության բարելավումներ, բայց կոչ էին անում իշխանություններին կոնկրետ միջոցներ ձեռնարկել քրեական ենթամշակույթը պահպանողներին պատժելու ուղղությամբ:

Փետրվարի 28-ին այդ ժամանակվա պաշտպանության փոխնախարար Գաբրիել Բալայանը նշեց, որ իրավապաշտպանների կոչերն իշխանություններին ու քրեական ենթամշակույթի սլաքները դեպի հրամկազմն ուղղելը քայքայիչ է և որ որոշ իրավապաշտպանների մոտ հրճվանք է առաջացնում ամեն նոր ողբերգական դեպքը: Նա նաև նկատեց, որ իրավապահները շուտով կգբաղվեն այդ կազմակերպություններով ու կպարզեն, թե որտեղից են դրանք ֆինանսավորվում:

Փետրվարի 29-ին «Մարդու իրավունքների տուն» ՀԿ-ը դատապարտեց Բալայանի հայտարարությունները՝ կոչ անելով իշխանություններին ձեռնպահ մնալ իրավապաշտպաններին վարկաբեկելուց ու իրավական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքներ հնչեցնելուց, դիտարկել Բալայանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հիմքերի առկայությունը և պարտադրել նրան ներողություն խնդրել իրավապաշտպաններից, իսկ ՀՀ պաշտպանության նախարարին՝ ձեռնարկել միջոցներ բանակում հանրային վերահսկողության ուժեղացման ուղղությամբ:

Արձագանքելով բանակում ոչ մարտական պայմաններում մահացած զինձառայողների ծնողների շարունակվող պահանջներին՝ վարչապետ Փաշինյանն օգոստոսի 3-ին որոշում ստորագրեց այդպիսի ութ չլուծված քրեական գործերի ուսումնասիրության նպատակով ձևավորել աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվեցին երեք անկախ փաստաբան և երեք փորձագետ Արդարադատության նախարարությունից և Վարչապետի աշխատակազմից: Ըստ հաղորդումների խմբին տրամադրվել էր գործերի նյութերը լիարժեք հասանելիություն՝ շրջանցելով իրավապահ կառույցները, որոնց մահացածների ազգականները չէին վստահում: 2019թ. հոկտեմբերին կառավարությունը հաստատեց Դատական և իրավական բարեփոխումների 2019-23թթ. ռազմավարությունը և դրանից բխող իրականացման գործողությունների ծրագրերը, որոնք նախատեսում են փաստահավաք խմբի ձևավորում մարդու իրավունքների այլ հիմնախնդիրների հետ մեկտեղ ուսումնասիրելու նաև ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերը: Սակայն գործողությունների ծրագրով նախատեսված ժամկետում չընդունվեց համապատասխան օրենսդրություն և հանձնաժողովը չձևավորվեց:

44-օրյա ինտենսիվ մարտական գործողությունների ընթացքում, որին ներգրավված էին Հայաստանը, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականները և Ադրբեջանը, եղան վստահարժան հաղորդումներ ապօրինի սպանությունների վերաբերյալ՝ ներառյալ գնդակահարություններ ու քաղաքացիական զոհեր (տես՝ Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանի վերաբերող գլխի 1.a., 1.b., 1.c., 1.d., 5 և 6 բաժինները): Հակամարտության կողմերը միմյանց դեմ հայցեր են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ մեկը մյուսին մեղադրելով վայրագությունների մեջ: Այս գործերին ՄԻԵԴ-ը դեռ ընթացք չի տվել:

Դեկտեմբերի 10-ին «Ամնեսթի ինթերնեյշնլը» զեկույց հրապարակեց, որտեղ ներկայացվում էին և՛ էթնիկ հայերի, և՛ էթնիկ ադրբեջանցիների կողմից թույլ տված վայրագությունները. հիմքում համացանցում շրջանառվող տասնյակ տեսանյութերից

քաղված 22 տեսանյութեր էին, որոնք իսկությունը ճշտվել էր: Այս 22 տեսանյութերից մեկով «Ամնեսթի ինթերնեյշնլի» զեկույցը փաստագրեց բերանը և ձեռքերը կապված ադրբեջանցի սահմանապահի կոկորդը կտրելն ու եզրակացրեց, որ սահմանապահը ստացավ վիրավորում, որն հանգեցրեց մահվան: Ըստ «Ամնեսթի ինթերնեյշնլի»՝ ադրբեջանական մամուլում նշել էին, որ սահմանապահն Իսմայիլ Իրապովն էր: «Ամնեսթի ինթերնեյշնլը» երկու երկրներին կոչ էր անում քննություն անցկացնել իրենց բնորոշմամբ «պատերազմական հանցագործության» դեպքերով:

Վստահարժան հաղորդումներ են եղել, որ հայկական, կամ էթնիկ հայեր հանդիսացող անջատողական և ադրբեջանական ուժերը տարբեր զինատեսակներով՝ հրետանի, հրթիռներ, կասետային զենքեր, կրակել են բնակելի տարածքների ուղղությամբ և վնասել քաղաքացիական ենթակառուցվածքներ: Այսօրինակ հարձակումները նաև հանգեցրել են զգալի թվով քաղաքացիական զոհերի:

Օրինակ՝ հոկտեմբերի 4-ին «Հյումըն ռայթս ուոթչի» հաղորդմամբ «հայկական ուժերը» խփեցին Գյանջային, որն Ադրբեջանի երկրորդ ամենամեծ քաղաքն է ու գտնվում էր տվյալ պահին ակտիվ ռազմական գործողությունների թատերաբեմից մոտ 28 մղոն հեռավորության վրա: Ադրբեջանի կառավարությունը հայտնեց, որ հրթիռային հարվածից զոհվել է մեկ քաղաքացիական անձ, իսկ 32-ը վիրավորվել են: Հոկտեմբերի 17-ին մեկ այլ հայկական հրթիռից Գյանջայում զոհվեց 14 քաղաքացիական անձ:

Հոկտեմբերի 30-ին «Հյումըն ռայթս ուոթչի» հաղորդմամբ հայկական կամ անջատողական ուժերի կողմից «Սմերչ» կայանքից կասետային ռումբեր են արձակվել՝ թիրախավորելով Բարդա քաղաքը, որը ռազմաճակատից արևմուտք էր՝ մոտ 10 մղոն հեռավորության վրա: ՀՀ պաշտպանության նախարարությունը հերքեց այս պնդումները: Ավելի ուշ հրապարակվեցին ռազմական թիրախները, որոնք ըստ պնդումների գտնվում էին Բարդայում: Ադրբեջանի իշխանությունների հաղորդմամբ հոկտեմբերի 27-ին և 28-ին քաղաքի թիրախավորման հետևանքով զոհվել է 26 քաղաքացիական անձ, այդ թվում մեկ հումանիտար օգնության աշխատակից Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերակցությունից, որը հաստատվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից:

Նոյեմբերի 2-ին Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարը քննադատեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ու դրա շուրջ գտնվող բնակեցված տարածքներին ուղղված շարունակական գրոհները: Գլխավոր հանձնակատար Միշել Բաչելետը նշել է. «բնակավայրերում ավերվել են տներ, փողոցներ, մարդիկ ստիպված փախուստի են դիմում կամ ապաստանում են նկուղներում»:

Ղեկտեմբերի 11-ին «Հյումըն ռայթս ուոթչը» փաստագրել է 11 միջադեպ, որոնց ժամանակ «հայկական ուժերն» օգտագործել են բալիստիկ հրթիռներ, չկառավարվող հրետանային հրթիռներ, մեծ տրամաչափի հրետանային արկեր, որոնք «Հյումըն ռայթս ուոթչի» հաղորդման համաձայն հանգեցրել են տասնյակ քաղաքացիական զոհերի ու վիրավորների:

Իշխանությունները հայտնում են, որ մարտական գործողությունների ընթացքում էթնիկ հայ քաղաքացիական անձանց շրջանում զոհվել են 75-ը, վիրավորվել՝ 167-ը: Ադրբեջանի իշխանությունների հաղորդամաբ հակամարտության ընթացքում զոհվել է 98 քաղաքացիական անձ և վիրավորվել են 400-ը:

Բախումներ, այդ թվում՝ փոխհրաձգություն ծանր զինատեսակների ու անօդաչուների գործարկմամբ, գրանցվել են նաև հուլիսի 12-16-ը Հայաստանի և Ադրբեջանի միջազգային սահմանին: Շփման գծի հատվածում կրկնվող փոխհրաձգությունների հետևանքով մահվան դեպքեր են գրանցվել քաղաքացիական անձանց շրջանում:

Քննությունն առաջընթաց չէր գրանցել 2018թ. Արմեն Աղաջանյանին մահվան գործով, որին գտել էին կախված վիճակում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում», ուր նա տեղափոխվել էր «Նուբարաշեն» ՔԿՀ-ից հոգեբանական գնահատում անցնելու նպատակով: Աղաջանյանի ընտանիքի անդամները հավատացած էին, որ նրան սպանել էին, որպեսզի նա մատնացույց չաներ իրեն հիվանդանոց տեղափոխվելուց առաջ ծեծի ենթարկած ՔԿՀ աշխատակիցներին: Ենթադրյալ ծեծի ենթարկողներից մեկին՝ մայոր Արմեն Հովհաննիսյանին ներկայացվել էր խոշտանգումներ թույլ տալու ու փաստաթղթեր կեղծելու մեղադրանք, սակայն առաջին ատյանի դատարանը վերաորակավորեց նրա արարքը որպես պաշտոնեական լիազորությունների գերազանցում և 2018թ. համաներման հիմքով նրան ազատ արձակեց: Տարվա ընթացքում ընտանիքը բողոքարկել է վճիռը վերաքննիչ դատարանում, սակայն հաջողության չեն հասել: Մահվան գործով քննությունը շարունակվում էր:

Տարվա ընթացքում շարունակվել է նախկին պաշտոնյաների դեմ մեծ հնչեղություն ունեցող գործով դատավարությունը՝ կապված 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած բողոքի ցույցերը ցրելու նպատակով զինված ուժերի ներգրավման հետ, որի ընթացքում զոհվել էին 8 քաղաքացիական անձ և 2 ոստիկան: Այս և հարակից քրեական գործերով ներկայացված են սահմանադրական կարգը տապալելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու, խոշտանգումների, կաշառքի հարցում հանցակցելու, պաշտոնական խարդախության

և 2008թ. հետընտրական դեպքերի հետ կապված ապացույցները կեղծելու մեղադրանքներ:

Այս գործերով կասկածյալ համարվող հայտնի դեմքերից են նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանը, պաշտպանության նախկին փոխնախարար Յուրի Խաչատուրովը, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը, նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արմեն Գևորգյանը, նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը, նախկին գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը և ուրիշներ: 2019թ. հուլիսին Քոչարյանին 2008թ. դեպքերի հետ կապված մեղադրանք ներկայացվեց սահմանադրական կարգի տապալման և ցույցերը բռնի ուժով ցրելու համար: Հունիսի 19-ին Քոչարյանը, որին նաև կոռուպցիայի մեղադրանք էր առաջադրված, գրավով ազատ արձակվեց՝ վճարելով երկու միլիարդ ՀՀ դրամ (շուրջ 4 միլիոն դոլար): Մայիսի 19-ի դրությամբ դեռևս ընթանում էր քննություն Ոստիկանության նախկին հրամանատարի տեղակալ Գեղամ Պետրոսյանի գործով, որին 2019թ. հունիսին մեղադրանք էր առաջադրվել ցույցերի ճնշման ընթացքում Ջաքար Հովհաննիսյանին սպանելու համար:

Սեպտեմբերին 2008թ. հետընտրական իրադարձությունների ժամանակ սպանված քաղաքացիների հարազատներից ոմանք հայտարարեցին, որ հրաժարվում են այսուհետ մասնակցել դատական նիստերին, քանի որ դատավարության երկու տարվա ընթացքում դատարանը դեռ չի սկսել գործն ըստ էության քննել պաշտպանական կողմի անհաշիվ ու հաճախ նմանատիպ միջնորդությունների ու բողոքների արդյունքում: Հարազատները մեղադրում էին պաշտպանական կողմին միտումնավոր գործընթացը ձգձգելու մեջ, իսկ Գլխավոր դատախազությանը՝ դատավարությունը ֆարսի վերածելու ու այն տեղից շարժելու համար արդյունավետ միջոցներ չձեռնարկելու մեջ:

բ) Անհետացումներ

Բշխանությունների կողմից կամ անունից անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԻՄԿ) մշակել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ պայմանավորված անհայտ կորածների մասին տվյալները և աշխատել է կառավարության հետ՝ անհայտ կորածների ընդհանուր ցանկը մշակելու շուրջ: Ըստ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 1990-ականների հակամարտության հետևանքով անհայտ կորել են մոտ 4500 հայ և ադրբեջանցի: Ըստ ոստիկանության

տվյալների 1990-ականների հակամարտության հետ կապված 867 հայ համարվում է անհայտ կորած: Դեկտեմբերի 15-ին ԿԽՄԿ հաղորդմամբ աշնանը տեղի ունեցած ռազմական գործողությունների հետ կապված անհայտ կորածների ընտանիքներից հազարավոր զանգեր ու այցեր են եղել ու ունեն հարյուրավոր դիմումներ քաղաքացիական անձանց ու զինվորների գտնելու վերաբերյալ: Տարեվերջի դրությամբ կառավարությունն աշխատանքներ էր իրականացնում անհայտ կորածների թիվը հստակեցնելու շուրջ:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Սահմանադրությունն ու օրենսդրությունն արգելում են նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն արգելանքի տակ գտնվող անձանց շարունակել են ենթարկել խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ: Ըստ իրավապաշտպանների, չնայած քրեական օրենսգիրքը սահմանում և քրեականացնում է խոշտանգումը, սակայն այն չի քրեականացնում այլ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը: Խոշտանգումներ թույլ տված պաշտոնյաների դատապարտման դեպքեր չեն եղել 2015թ.-ից՝ քրեական օրենսգրքով խոշտանգումների նոր սահմանումն ընդունելուց հետո:

Ըստ մարդու իրավունքների ակտիվիստների՝ իրավապահների անպատժելիությունը նախկին բռնությունների դեպքերի հետ կապված նպաստել է, որպեսզի խնդիրը շարունակվի: Ավելին, դիտորդներն այս գործերով մեղավորներին չպատժելը բացատրում էին այն հանգամանքով, որ 2018թ. քաղաքական անցումից հետո իրավապահ մարմիններում բացի բարձրագույն ղեկավարությունից անձնակազմի այլ փոփոխությունների չեն եղել:

Մայիսի 22-ին ՀՔԱՎ-ը զեկույց հրապարակեց խոշտանգումների ու նվաստացնող վերաբերմունքի մասին, որը նոր կորոնավիրուսի վարակի տարածումը կանխարգելելու նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկման արդյունքում ներկայացվող նրանց երրորդ զեկույցն էր: Զեկույցի դիտարկած ժամանակահատվածում (մարտի 16-ից մայիսի 16-ը) ՀՔԱՎ-ը քաղաքացիներից ստացել էր ութ բողոք ոստիկանության աշխատակիցների կողմից արժանապատվությունը նվաստացնելու, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, խոշտանգման դեպքերի վերաբերյալ: Ըստ զեկույցի այս թվերը

գերազանցում էին սովորական պայմաններում գրանցվող դեպքերի թիվը՝ փաստելով, որ որոշ ոստիկաններ օգտվել են արտակարգ դրության պայմաններում օբյեկտիվ պատճառներով ոստիկանության լիազորությունների շրջանակի ընդլայնման հանգամանքից: Այս արարքների համար ոստիկաններին պատժելու մասին հաղորդումներ չեն եղել:

Սեպտեմբերի 13-ին ծանրամարտի չեմպիոն Արմեն Ղազարյանը ոստիկանությունում հաղորդում ներկայացրեց, որ Երևանի Նոր Նորքի ոստիկանության բաժանմունքի ոստիկաններն իրեն առևանգել ու խոշտանգումների են ենթարկել: Լրատվամիջոցներին տրամադրած նրա հաղորդման համաձայն Ղազարյանը սեպտեմբերի 6-ին եղել է իր ծանոթներից մեկի տան մոտ, որտեղ նկատել է, որ քաղաքացիական հագուստով երկու ոստիկան ձերբակալում են մեկին: Երբ հարցրել է, թե ինչ են անում, ոստիկանները նրան էլ են իրենց սեփական մեքենայով «առևանգել»՝ «սրան էլ ծալեք, ջարդեք» հրահանգով հայհոյախառն արտահայտություններով ու բռնի ուժով նստեցնելով մեքենան: Ղազարյանը նշում է, որ ավելի ուշ ինքն իմացել է, որ ոստիկանները մյուս անձին ձերբակալել են ոստիկաններից մեկի հետ ունեցած անձնական վեճի պատճառով: Ոստիկանական բաժանմունքում Ղազարյանին ծեծել են մի քանի հոգով, ծեծի ձայներ լսել է նաև մեկ այլ սենյակից: Նրա նկատմամբ ցուցաբերվել է ոչ մարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունք: Նա նշում է, որ այնպես էին ծեծում, որ շնչելը դժվար էր ու ինքը մտածում էր՝ կենդանի կմնա, թե չէ: Երեք ժամ անց նրան բաց են թողել ինչ-որ թղթեր ստորագրելուց հետո, որոնք անգամ թույլ չեն տվել կարդալ: Բժշկական գննությամբ նրա մոտ կային վնասվածքներ կրծքավանդակի ու թոքերի հատվածում: Ղազարյանը նշում էր, որ հաղորդում ներկայացնելուց հետո Նոր Նորքի բաժանմունքի ոստիկանները սկսել են ճնշումներ գործադրել, որպեսզի հաղորդումը ետ վերցնի, սպառնացել են «գործ սարքել» նրա վրա: Ղազարյանը նշում էր, որ ցնցված էր ոչ այնքան իրեն ծեծի ենթարկվելու փաստով, այլ անպատժելիության համոզմունքով, որ կար այդ ոստիկանների մոտ: Սեպտեմբերի 17-ին Հատուկ քննչական ծառայությունը խոշտանգման մեղադրանքով քրեական գործ հարուցեց, իսկ սեպտեմբերի 25-ին ձերբակալվեցին երեք ոստիկան (խոշտանգման մեղադրանքով) ու ոստիկանության բաժնի պետը (Ղազարյանի բողոքից հետո ծառայողական քննության ընթացքին միջամտելու հետ կապված պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանքով): Դեկտեմբերի 15-ին Հատուկ քննչական ծառայությունը նախնական կալանքի տակ գտնվող երեք ոստիկանների դեմ հարուցված գործը խոշտանգման մեղադրանքով դատարան ներկայացրեց: Նոյեմբերի 30-ին ոստիկանության բաժնի պետին ներկայացված մեղադրանքը կարճվեց, քանի որ նա զղջում էր արածի համար:

Եղել են հաղորդումներ ոստիկանական բաժանմունքներում տեղի ունեցող բռնությունների մասին, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձերբակալվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական դիտորդների կողմից: Քրեական արդարադատության մարմինները շարունակել են դատապարտումների համար հիմք ընդունել խոստովանություններն ու հարցաքննությամբ ձեռք բերված տեղեկությունները: Ըստ իրավապաշտպանֆաստաբանների՝ ոստիկանության հարցաքննությունների ժամանակ վատ վերաբերմունք թույլ չտալու համար չեն եղել բավարար ընթացակարգային երաշխիքներ, օրինակ՝ ուժով կամ ընթացակարգային խախտմամբ ձեռք բերված իրեղեն ապացույցների անընդունելիությունը: Ըստ իրավապաշտպանֆաստաբանների տեսագրումը ոստիկանության բաժիններում չարաշահումների մասով արդյունավետ երաշխիք չէր, քանի որ սերվերները, որտեղ պահվում են այդ ձայնագրությունները, տնօրինվում են նույն ոստիկանական բաժնի կողմից ու կարող են թույլ տալ շահարկումներ:

Առաջընթաց չկար 2019թ. ապրիլին մահացած Էդգար Ծատինյանի գործով. նա մահացել էր հիվանդանոցում, ուր տեղափոխվել էր Երևանի ոստիկանության Նոր Նորքի բաժնի բերման ենթարկվելուց հետո: Ծատինյանը մահացել էր թմրադեղերի գերդոզավորումից՝ կուլ տալով երեք գրամ մետամֆետամին, որն ըստ հաղորդումների ոստիկաններն ուզում էին օգտագործել նրա վրա «գործ սարքելու» համար, քանի որ նա հրաժարվում էր խոստովանել սպանություն կատարելը: 2019թ. ապրիլին խոշտանգումների փաստով Հատուկ քննչական ծառայությունում սկսված քննությունը դեռ ընթացքի մեջ էր. տարեվերջի դրությամբ դեռ կասկածյալներ ներգրավված չէին:

Տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր ոստիկանության ներքին գորքերի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Երանոսյանի գործով դատաքննությունը. 2018թ. ապրիլին ցուցարարների նկատմամբ բռնություններ կիրառելու ընթացքում իր ունեցած դերակատարման համար նրանց առաջադրվել է մեղադրանք պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, որը զուգորդվել է բռնություն գործադրելով և առաջացրել է ծանր հետևանքներ:

Զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների մասշտաբների և դրանք խոշտանգում համարելու մասին հաղորդումներ չեն եղել: Ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի ռազմական ոստիկանության գործառույթների ու լիազորությունների մասին հստակ օրենսդրական սահմանման բացակայությունը, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների բացակայությունը հնարավոր էր դարձնում քրեական գործերով վկաների ու կասկածյալների հանդեպ

խոշտանգումների ու վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը ռազմական ուստիկանության կողմից:

Սեպտեմբերի 9-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գնել Գասպարյանն աննախադեպ վճիռ կայացրեց առ այն, որ Արթուր Հակոբյանի գործով քննիչները պատշաճ քննություն չեն իրականացրել Հակոբյանի հանդեպ խոշտանգումների վերաբերյալ: Դատավորը պարտավորեցրել է նշանակել դատահոգեբանական փորձաքննություն ըստ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի», որն հայտնի է որպես Ստամբուլյան արձանագրություն: 2015թ. Հակոբյանը վաղաժամկետ արձակվել էր զինվորական ծառայությունից՝ մտավոր խնդիրների պատճառով: Ըստ նրա ընտանիքի անդամների և փաստաբանի՝ մինչ գորակոչվելը նա հոգեկան առողջության խնդիրներ չի ունեցել, սակայն խոշտանգումների ու բռնությունների հետևանքով խորը հոգեբանական տրավմա է ապրել: 2019թ. հունվարին Վճռաբեկ դատարանն ընդունեց, որ խախտվել է Հակոբյանի խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը, սակայն մինչև ընդհանուր իրավասության դատարանի սեպտեմբերի 9-ի վճիռը գործն առաջ չէր ընթանում շարունակվող բողոքների ու հակընդդեմ բողոքների պատճառով:

Եղել են արժանահավատ հաղորդումներ այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված հայկական ուժերը թույլ են տվել թշնամու զինվորների դիակների անարգումներ (տես՝ Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանի վերաբերող գլխի 1.ա. բաժինը): Օրինակ՝ դեկտեմբերի 10-ի «Ամնեսթի ինթերնեյշնլի» զեկույցում, որտեղ համացանցում շրջանառվող բազմաթիվ տեսանյութերից առանձնացվել էին իսկությունը ճշտված 22 տեսանյութ, ի թիվս այլ բռնությունների կային նաև թշնամու զինվորների դիերի անարգման դրվագներ: Ըստ զեկույցի՝ տեսանյութերից 11-ը «Ամնեսթի ինթերնեյշնլի» որակմամբ «խախտումներ» էին «հայկական ուժերի» կողմից: Որոշ տեսանյութերում էթնիկ հայ զինվորներն ադրբեջանցի զինվորի դիակի ականջն են կտրում, ոտքերը պարանոձ կապած գետնի վրայով քարշ են տալիս ադրբեջանցի զինվորի դին, կանգնում են ադրբեջանցի զինվորի դիակի վրա: Տարեվերջի դրությամբ բռնության այդ ենթադրյալ դեպքերի հետ կապված ձեռքարկություններ պատկան մարմինների կողմից չեն եղել:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտային պայմանները բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժապասարկմամբ և քրեական ենթամշակույթի աստիճանակարգային օղակների («օրենքով գողեր») գերիշխող դիրքով, իսկ որոշ դեպքերում պայմանները խիստ ծանր էին և կյանքի համար վտանգավոր: Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը բանտերի մակարդակում այլևս խնդրահարույց չէր, բայց դեռևս առկա էր «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ խցերի մակարդակում:

Ֆիզիկական պայմաններ. Ըստ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ)՝ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում 2019թ. ընթացող վերանորոգումների բանտարկյալների համար նշանակալի բարելավումների չեն հանգեցրել: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, որը երկրի 12 ՔԿՀ-ներից մեկն է, պայմանները ծանր էին և կյանքի համար վտանգավոր: Իրավապաշտպան դիտորդները և ՀԴԽ-ը նույնպես շարունակել են մտահոգություններ հնչեցնել «Արմավիր» ՔԿՀ-ի ֆիզիկական պայմանների մասին, որտեղ չկար օդափոխության և հովացման համակարգ և արդյունքում ամռան ամիսներին խցերում օդի ջերմաստիճանը հասնում էր 113⁰ ըստ Ֆարենհայտի: Տարվա ընթացքում որոշ միջոցներ են ձեռնարկվել օդափոխությունը բարելավելու համար, սակայն դրանք միայն մասնակի բարելավումներ էին: Հունիսի 18-ին արդարադատության նախարարը հայտնեց, որ քրեական գործ է հարուցված՝ պարզելու, թե ինչու «Արմավիր» ՔԿՀ-ի ճարտարապետական նախագծով նախատեսված օդափոխության համակարգը չի կառուցվել:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) և ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների մահվան հետ կապված անպատժելիությունը և դրանց կանխման համակարգային մոտեցումների բացակայությունը շարունակում էին լինել ՔԿՀ-ներում մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներից: Հիվանդության պատճառով գրանցված մահերի դեպքում չէին կատարվում քննություններ հանգամանքները պարզելու համար, օրինակ՝ արդյոք հիվանդությունը ձեռք է բերվել անազատության մեջ գտնվելու ընթացքում, կամ արդյոք այն կարող էր կանխարգելվել կամ բուժվել: Այնուհանդերձ, կառավարության տվյալներով տարվա ընթացքում եղել են դրական տեղաշարժեր բժշկական ծառայությունների մասով, մասնավորապես՝ ապահովվել է ավելի օպերատիվ բուժում, և չնայած նոր կորոնավիրուսի ռիսկին՝ ՔԿՀ-ներում գրանցվել է մահվան միայն 5 դեպք (ոչ մեկը նոր

կորոնավիրուսով պայմանավորված չէր), մինչդեռ 2019թ. գրանցվել էր մահվան 21 դեպք:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում հայտարարած հացադուլից դուրս գալուց 9 օր հետո մահացած «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության փոխնախագահ Մհեր Եղիազարյանի մահվան փաստով 2019թ. հունվարին հարուցված գործի քննությամբ առաջընթաց չկար:

ՄԻՊ գրասենյակը և ՀԴԽ-ը շարունակում էին մատնանշել քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը: Ըստ ՀԴԽ-ի կար հաստիքային հոգեբանների սակավություն, մինչդեռ հարյուրավոր բանտարկյալների անհրաժեշտ էր հոգեբանական աջակցություն: Ըստ ՀԴԽ-ի՝ ինքնավնասման ու ինքնասպանության բազմաթիվ դեպքեր հենց հոգեբանական աջակցության բացակայության հետևանք են: ՀԴԽ-ի ապրիլի 15-ին հրապարակված ուսումնասիրության համաձայն մեկ հոգեբանին հասնող պացիենտների թիվը, հսկայաձավալ թղթաբանությունը, աշխատանքային ոչ համարժեք պայմանները, ինչպես նաև ՔԿՀ-ների հոգեբանների դերի շուրջ տիրող հստակության բացակայությունը հանգեցրել են հոգեբանական ծառայությունների ձախողման ու սակավաթիվ մասնագետների ուժերի ջլատմանը: ՄԻՊ-ը քննադատում էր ինքնախեղում թույլ տված բանտարկյալներին պատժելու պրակտիկան՝ դրա փոխարեն առաջարկելով նրանց ցուցաբերել պատշաճ բժշկական ու հոգեբանական օգնություն:

Կառավարությունը վերահաստատեց ՔԿՀ-ներում կոռուպցիայի հանդեպ գրոյական հանդուրժողականության քաղաքականությունը և վճռականություն հայտնեց արմատախիլ անել բանտային կյանքում գերիշխող կազմակերպված քրեական աստիճանակարգային կառուցվածքը, որտեղ բանտային ոչ ֆորմալ աստիճանակարգի վերևում գտնվող ընտրյալ բանտարկյալները (կոչվում են «նայողներ») վերահսկողություն են ապահովում բանտարկյալների ու բանտային կյանքի նկատմամբ: ՔԿՀ-ների անձնակազմի համալրվածության լուրջ բացերը հանգեցրել են այս իրավիճակին ու միաժամանակ սրել են այն, որովհետև բանտում կարգ պահպանելու համար բանտային աշխատողները ստիպված են եղել ապավինել «նայողների» օգնությանը:

Ըստ որոշ հաղորդումների՝ քրեական աստիճանակարգության դեմ կառավարության ձեռնարկած ջանքերը երբեմն հանգեցրել են բանտարկյալների շրջանում մարդու իրավունքների խախտման: Օգոստոսի 24-ին «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ Ժաննա Ալեքսանյանը հայտնեց, որ դիմակավորված

մարդիկ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի խցում գտնվող երեք բանտարկյալների հանդեպ բռնություն են կիրառել: Հետագա հաղորդումներում ծեծի ենթարկվածներից մեկի կինը նշել էր, որ 10-12 հոգի դիմակավորված մարդիկ բռնություն են կիրառել երեք բանտարկյալների նկատմամբ՝ օգտագործելով իրենց ձեռքերը, ոտքերը, մահակներ ու էլեկտրաշոկ:

Օգոստոսի 24-ին արդարադատության նախարարության խոսնակը նշեց, որ ՔԿՀ-ներում պարբերաբար իրականացվում են անսպասելի խուզարկություններ՝ արգելված պարագաներ գտնելու նպատակով, և ՔԿՀ-ներն իրավունք ունեն համամասնական ֆիզիկական ուժ գործադրել օրինական պահանջները չկատարելու կամ դրանց խոչընդոտելու դեպքում: Ի պատասխան ՄԻՊ գրասենյակը և ՀԴԽ ներկայացուցիչներն այցելեցին բանտարկյալներին՝ արձանագրելով նրանց իրավունքների խախտումներ, այդ թվում՝ բազմաթիվ մարմնական վնասվածքներ, որոնք սկզբնապես արձանագրված էին իբրև մահճակալից ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքներ: Արդարադատության նախարարությանը ներկայացված հատուկ զեկույցում ՀԴԽ-ը նկատեց, որ դրանք բանտարկյալների նկատմամբ մի քանի տարվա ընթացքում իրենց արձանագրած վատթարագույն ոտնահարումներից են: ՀԴԽ-ը սա որակում էր հանցանք ու այդ մասին նաև հաղորդում ներկայացրեց Գլխավոր դատախազությանը: Սեպտեմբերի 4-ին ՀԴԽ-ը տեղեկություն ստացավ, որ Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ է հարուցել բռնության կիրառմամբ պաշտոնեական լիազորությունները գերազանցելու միջադեպի փաստով:

Օգոստոսի 31-ին Հատուկ քննչական ծառայությունը ձեռքակալեց «Նուբարաշեն» ՔԿՀ-ի նախկին պետ Սամվել Մկրտչյանին փետրվարին բանտարկյալ Վահագն Աբգարյանի վրա գործած հարձակման հարցում իր ունեցած դերակատարման ու դեպքը քողարկելու համար: Սեպտեմբերի 2-ին Մկրտչյանն ազատ արձակվեց, քանի որ ընդհանուր իրավասության դատարանը չբավարարեց կալանքը որպես խափանման միջոց կիրառելու Հատուկ քննչական ծառայության միջնորդությունը: Փետրվարի 24-ին Մկրտչյանին խարդախության ու իշխանությունը չարաշահելու մեղադրանք ներկայացվեց այլ բանտարկյալների կողմից Աբգարյանին (ըստ հաղորդումների նա քրեական աստիճանակարգի անդամ է) ծեծի ենթարկելու կապակցությամբ: Ըստ ավելի վաղ ներկայացված հաղորդումների արտերկրի «քրեական հեղինակությունների» կողմից հրահանգված հարձակման հանգամանքները թաքցնելու համար Մկրտչյանն աշխատողներին ցուցում է տվել արձանագրել, որ Աբգարյանը սայթաքել է սանհանգույցից դուրս գալու ժամանակ: Գործով ձեռքակալվել են նաև ՔԿՀ այլ աշխատակիցներ:

Ըստ դիտորդների քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիան արմատախիլ անելու ամենավերին օղակների քաղաքական կամքը դեռևս ինստիտուցիոնալ փոփոխությունների տեսք չի ստացել, թեպետ առանձին աշխատակիցներ պատժվել են կոռուպցիայի համար: Փորձագետների գնահատմամբ կոռուպցիան հավանաբար կպահպանվի քանի դեռ առկա է քրեական ենթամշակույթը:

2019թ. սեպտեմբերից ՔԿՀ-ներում բժշկական ծառայություններ է մատուցում Արդարադատության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպությունը: Այնուհանդերձ, ՔԿՀ-ների բուժօժանդություններում շարունակվում էին պահպանվել կադրային ոչ լիարժեք համալրման, տեխնիկական զինվածության անբավարար մակարդակի և նեղ մասնագիտական բուժօգնության հասանելիության հետ կապված խնդիրները: Նաև արձանագրվել է նեղ մասնագետների կողմից նշանակվող դեղորայքի պակաս, թեպետ 2018թ.-ից ի վեր ՔԿՀ-ների դեղերի ձեռք բերման բյուջեն եռապատկվել է: Որոշ դեպքերում բանտարկյալների հարազատներն են ապահովել որոշակի դեղամիջոցներ կամ այնպիսի դեղեր, որոնք առավել արդյունավետ են, քան ՔԿՀ-ում տրամադրվածները:

Շատ ՔԿՀ-ներ շարունակում էին մնալ առանց հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հարմարությունների:

Ըստ ՀԴԽ-ի և այլ իրավապաշտպան կազմակերպությունների՝ բանտերում ամենավատ պայմաններում շարունակել են գտնվել լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձինք: Քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը վերահաստատում և հանդուրժում էր ոտնձգություններով ուղեկցվող վերաբերմունքը և ԼԳԲՏԻ անձանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները զգալիորեն ավելի վատ էին: ՀԴԽ-ը փաստում էր, որ նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, ինչպես նաև նրանք, ովքեր հրաժարվում են ապրել «բանտի չգրված օրենքներով», պահվել են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են եղել կատարել նվաստացնող առաջադրանքներ, ինչպիսին է սանհանգույցների մաքրումը, մյուսների աղբը հավաքելն ու սեռական ծառայությունների մատուցումը: Այդ բանտարկյալների սպասքը և ուտելիքի պատրաստումն առանձնացված էր, նրանք ունեին առանձին լվացքի մեքենա, և անգամ առանձին պատժախուց:

Ապրիլի 3-ին Գլխավոր դատախազի խորհրդականը հայտարարեց, որ դատախազությունը դիմելու է դատարաններին 20 ամբաստանյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց վերացնելու միջնորդությամբ, որովհետև նրանք նոր կորոնավիրուսի բարդությունների հետ կապված բարձր ռիսկայնության խմբում էին գտնվում:

Վարչարարություն. Բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի վստահելի պնդումների դեպքում համապատասխան մարմինները չեն ապահովել արագ քննություններ:

Դատապարտյալներն ու կալանքի տակ գտնվողները միշտ չէ, որ ապահովվում էին տեսակցությունների ողջամիտ հնարավորություններով՝ հարմար տարածքների բացակայության հետևանքով: Տարվա ընթացքում տեսակցությունների սահմանափակում է եղել նաև նոր կորոնավիրուսի համավարակի պատճառով:

Անկախ մոնիտորինգ. Կառավարությունն ընդհանուր առմամբ թույլատրել է տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեին իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մոնիտորինգ, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Իրավասու մարմինները դիտորդներին թույլատրել են առանձնագրույցներ ունենալ բանտարկյալների հետ և թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

Տեղական անկախ մոնիտորինգի հետ կապված, այնուհանդերձ, կային սահմանափակումներ: Արդարադատության նախարարությունը շարունակում էր մերժել ՀԴԽ դիտորդների մուտքը կալանքի տակ գտնվող որոշ անձանց մոտ, որոնց հետ կապված քննություն իրականացնող մարմինը հաղորդակցության սահմանափակման պահանջ էր առաջ քաշել: ՀԴԽ-ը նաև զրկված էր այդ անձանց մեկուսացման պայմանները ստուգելու հնարավորությունից: ՀԴԽ-ն այս սահմանափակումները համարում էր կամայական և կարծում էր, որ քննություն իրականացնող մարմնի որոշումները չպետք է վերաբերվեն ՀԴԽ-ին: Ավելին, նոյեմբերի 19-ին ՀԴԽ քննադատեց Արդարադատության նախարարությանը մարտի 20-ին ընդունված նոր որոշման համար, որով կանոնակարգվում էր ՀԴԽ գործունեությունը, ինչը հակասում էր նախկին պայմանավորվածություններին: Ըստ ՀԴԽ հայտարարության որոշմամբ լրացուցիչ սահմանափակումներ էին սահմանվում իրենց գործունեության համար, օրինակ՝ ՔԿՀ-ի ղեկավարությունից ոչ-աշխատանքային ժամերին այցելության համար թույլտվություն ստանալը:

Դրական տեղաշարժեր. Տարվա ընթացքում կառավարությունն ավարտին է հասցրել մի շարք շինարարական նախագծեր, որոնցով բարելավվել են ՔԿՀ-ների ֆիզիկական պայմանները: Սա ներառում է «Արմավիր» ՔԿՀ-ի երկարաժամկետ տեսակցությունների բաժանմունքի նորոգումը. «Աբովյան» ՔԿՀ-ի արտաքին կոյուղագծերի, լոգասենյակների ու սանհանգույցների, բանտարկյալների հիվանդանոցի կապիտալ վերանորոգումը, այդ թվում՝ հարմարեցված լոգասենյակների ու սանհանգույցների կառուցումը. «Կոշ» ՔԿՀ-ի արտաքին ջրահեռացման համակարգի և ճաշարանի կապիտալ վերանորոգումը:

2019-20 ուստարվա ընթացքում Արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը միջնակարգ կրթություն է իրականացրել «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ներից 11 հոգու համար: Նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված առկա ուսուցման սահմանափակումների կիրառումից հետո Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը 19 տարեկաններից ցածր բանտարկյալների միջնակարգ կրթությունը սկսեց ապահովել առցանց եղանակով:

Կառավարության կողմից տարվա ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ որոշ առաջընթաց նկատվեց և ընդհանուր առմամբ բարելավվեց սննդի ապահովումը ՔԿՀ-ներում: Հունվարին կոռուպցիան կանխելու, ինչպես նաև կադրային սղության հարցը կարգավորելու նպատակով ՔԿՀ աշխատակիցների աշխատավարձը բարձրացվեց 30 տոկոսով: Հունվարի 22-ին Ազգային ժողովն օրենսդրական փոփոխություններ կատարեց՝ քրեականացնելով քրեական ենթամշակույթը, որ հայտնի է նաև որպես «օրենքով գողերի» հիերարխիկ կազմակերպված հանցավոր խումբ: Նոր օրենքի համաձայն «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ դեկավարելը» պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, իսկ «մասնակցելը կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելը» պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: Իսկ թե ինչն է համարվում խմբավորում, սահմանված է շատ լայնորեն և անդամները կարող են ձերբակալվել անգամ եթե հանցագործություն չեն կատարել:

Երկու ՔԿՀ-ներից սկսված սննդի ապահովման պիլոտային ծրագիրը տարվա ընթացքում ներդրվեց երկրի բոլոր 12 ՔԿՀ-ներում: Ըստ ՀԴԽ-ի՝ բանտարկյալներին ապահովվող սննդի որակը բարելավվել էր և նախաճաշը, ճաշն ու ընթրիքն ամեն օր պատրաստվում էր տեղում մասնագետ խոհարարների կողմից: Բազմազանությունն ապահովելու համար պայմանագիրը սպասարկող ընկերությունն ամեն շաբաթ

առաջարկում էր նոր ճաշացանկ՝ պահպանելով բանտապետերի կողմից հաստատած պահանջները սննդակարգի որակի, կալորիականության ու այլ հարցերի շուրջ:

Դիտորդների կողմից զգալի բարելավումներ էին մատնանշվում ցմահ դատապարտվածների վաղաժամկետ կամ պայմանական արձակման հարցերում. ցմահ ազատազրկման դատապարտված 13 բանտարկյալ տարվա ընթացքում բարձր աստիճանի անվտանգության մեկուսարաններից տեղափոխվել են ավելի ցածր աստիճանի մեկուսարաններ (փակ հաստատությունից կիսափակ). 8-ը կիսափակից տեղափոխվել են կիսաբաց հաստատություն. 2-ը պայմանական ազատ են արձակվել ՔԿՀ-ում դրսևորած օրինակելի վարքի հիման վրա:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը և սահմանվում ձերբակալության կամ կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու իրավունք յուրաքանչյուրի համար: Տարվա ընթացքում եղել են կամայական ձերբակալությունների մասին հաղորդումներ:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ ձերբակալել անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու, փաստաբան ունենալու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գործում է գրավով ազատ արձակելու տարբերակ: Ըստ իրավապաշտպան փաստաբանների՝ 2018թ. «թավշյա հեղափոխությունից» անմիջապես հետո դատարաններն ավելի քիչ էին կիրառում նախնական կալանքը և առավել հակված էին կիրառել խափանման այլ միջոցներ, օրինակ՝ գրավով ազատ արձակել և ստորագրություն վերցնել երկրից չբացակայելու մասին:

Այնուամենայնիվ, 2019թ. -ից սկսած դիտորդները նկատել են, որ դատարաններն ավելի ու ավելի շատ են վերադառնում նախնական կալանքը որպես խափանման միջոց

կիրառելու և փախուստի չդիմելու ու գործի քննությանը չխոչընդոտելու ապացուցողական բեռը կասկածյալին թողնելու նախկին գործելաոճին: Ընդհանուր իրավասության դատարանները սովորական քրեական գործերի դեպքում առավել հակված էին մերժել գրավը և խափանման միջոց սահմանել նախնական կալանքը, իսկ նախկին պաշտոնյաների հետ կապված հնչեղ կոռուպցիոն գործերում հաճախ մերժում էին նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դատախազի միջնորդությունը՝ առիթ տալով որոշ դիտորդների կասկածի տակ առնել դատավորների անկողմնակալությունը: Փորձագետները նաև նկատում էին, որ հնչեղ գործերի հետ կապված կալանք կիրառելու դեպքերում դատախազությունը հաճախ դատարանին չէր ներկայացնում համոզիչ ու փաստարկված միջնորդություններ:

Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած ունեն փաստաբան ունենալու իրավունք, իսկ անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ իրավապաշտպան դիտորդների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը որոշ դեպքերում խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռվող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձերբակալելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ և ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան ունենալու նրանց իրավունքը: Այդ պրակտիկան առավել ակնառու կերպով կիրառվում էր մարզերում:

Հայ և ադրբեջանցի պաշտոնյաները պնդում էին, որ աշնան ինտենսիվ մարտական գործողություններից հետո երկու կողմում էլ կային գերեվարված զինվորներ (Տես՝ Մարդու իրավունքների մասին գեկույցի Ադրբեջանի վերաբերող գլխի 1.a., 1.b., 1.c. բաժինները): Տարեվերջի դրությամբ երկու փոխանակում է կատարվել՝ արդյունքում վերադարձվել է 57 էթնիկ հայ և 14 ադրբեջանցի գերի: ԿԽՄԿ-ի ներկայացուցիչներն այցելել են մի շարք գերեվարված անձանց և շարունակում էին աշխատել կողմերի հետ ճշգրիտ ցուցակներ կազմելու ու մնացած գերեվարված անձանց փոխանակումը խրախուսելու ուղղությամբ:

Կամայական ձերբակալություն. Տարվա ընթացքում եղել են կամայական ձերբակալությունների մասին մի քանի հաղորդումներ: Օրինակ՝ օգոստոսի 6-ին ՋԼՄ-ներում հաղորդում եղավ Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիայի նախագահ Նինա Կարապետյանցին բերման ենթարկելու ու այնուհետև ազատ արձակման մասին այն բանի համար, որ նա միայնակ բողոքի ակցիա էր անում ոսկու

հանքի շահագործման դեմ, թեպետ արտակարգ դրության մասին դրույթները որևէ սահմանափակում չէին նախատեսում միայնակ գործողությունների մասով: Նույն օրը հանքի դեմ ուղղված բողոքի համար ոստիկանություն բերման ենթարկվեցին նաև այլ իրավապաշտպաններ ու բնապահպան ակտիվիստներ, այդ թվում՝ Հելսինկյան ասոցիացիայի իրավաբան Արա Ղարաբյոզյանը, «Ոչ կանանց նկատմամբ բռնություններին» կոալիցիայի համակարգող Ջարուհի Հովհաննիսյանը: Ըստ ոստիկանության բերման ենթարկվածները հրաժարվել էին կատարել ոստիկանության օրինական պահանջները: Իր տարեկան զեկույցում Հայաստանի հելսինկյան կոմիտեն նկատեց, որ 2019թ. հուլիսից 2020թ. հուլիս ժամանակահատվածում հավաքների ժամանակ ավելացել է ձերբակալությունների թիվը, և քննադատեց իշխանությունների որոշումը նոր կորոնավիրուսի սահմանափակումների շրջանում թույլատրել մինչև հինգ հոգու մասնակցություն մշակութային, ժամանցային, տոնական ու հիշատակի միջոցառումների ժամանակ, սակայն չթույլատրել հինգ հոգանոց բողոքի ակցիաներ:

Նախնական կալանք. Երկարատև նախնական կալանքը շարունակում էր մնալ խնդրահարույց: Որոշ դիտորդներ համարում էին, որ քննիչները չափից շատ են օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց:

Թեպետ օրենքը պահանջում է, որ դատախազները ներկայացնեն լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ ծանր գործերի պարագայում: Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ տևողության» մասին: Դատավորները բավարարել են դատախազներից պարբերաբար ստացվող դատական լսումները հետաձգելու առաջարկները: Դատախազները դատական լսումների ձգձգման պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշտպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքննությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ:

Հունվարի 21-ին ՄԻՊ գրասենյակն արտահերթ զեկույց հրապարակեց ժամկետների պահանջները չպահելու համար դատարանների պատասխանատվության ու ողջամիտ

Ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության մասին: Ըստ զեկույցի Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տվյալներով միայն Երևանում 155 քրեական գործ և 1.682 քաղաքացիական գործ արդեն երկու տարուց ավել վարույթում են գտնվում, իսկ որոշները՝ ավելի քան 10-ը տարի: Այսպիսի 1.123 գործ գտնվում է ընդամենը յոթ դատավորի վարույթում:

Հունիսի 1-ին ՁԼՄ-ներում հաղորդում եղավ, որ վերաքննիչ դատարանն արդարացրել է Արմեն Ղազարյանին, որն արդեն վեց տարի և երեք ամիս գտնվում էր անազատության մեջ գողության, առևանգման ու ծեծկռտուքի մեղադրանքով: Վեց տարի նախնական կալանքի տակ գտնվելուց հետո ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Պետրոսյանը նրան մեղավոր էր ճանաչել և դատապարտել 6,5 տարվա ազատազրկման:

Թեպետ Բարձրագույն դատական խորհուրդը մարտի 24-ին որոշում կայացրեց կիրառել առցանց հեռահաղորդակցության գործիքներ, որպեսզի նոր կոնորավիրուսի համավարակի պայմաններում դատավարություններ իրականացվեն, սակայն դատերի ձգձգումները շարունակվում էին: «Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիա» ՀԿ-ի ու «Իրավունքի ուժը» ՀԿ-ի մշտադիտարկման համատեղ զեկույցի համաձայն մի շարք դատարաններում ձգձգումներ եղան պայմանավորված տեխնիկական պատրաստվածություն բացակայությամբ. ձգձգված լսումները ներառում էին նաև հրատապ հարցեր, ինչպիսիք են խափանման միջոցի կիրառումը: Օրենքը քրեական գործերի պարագայում չի նախատեսում հեռահաղորդակցության միջոցների կիրառում և ըստ դիտորդների՝ գործերի ձգձգումը հիմնականում պայմանավորված էր դատավորների ու դատախազների դատարան չներկայանալու փաստով:

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Ըստ իրավական փորձագետների կասկածյալները չեն ունեցել գործնական հնարավորություն իրենց ձերբակալության օրինականությունը բողոքարկելու համար: Այն դեպքերում, երբ մեկ դատարան արդեն վճիռ է կայացրել նախնական կալանքի վերաբերյալ, հավանական չէր, որ մեկ այլ դատարան հարցականի տակ դներ այդ որոշումը:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անաչառություն դատական համակարգի կողմից ի ցույց չի

դրվում: Հանրային վստահությունը դատական համակարգի անկողմնակալության հանդեպ շարունակում էր անկում ապրել, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները փաստում էին, որ արդարադատության համակարգում մնացել են բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք ծառայել են նախորդ իշխանություններին և շարունակաբար վճիռներ են կայացնում ի նպաստ նրանց: Մտահոգիչ էր մնում դատավորների կոռումպացվածությունը: Տարվա ընթացքում ՀԿ-ները շարունակում էին հաղորդել, որ բազմաթիվ դատավորներ ունեն նշանակալի քանակությամբ գույք և ակտիվներ, որոնք իրենց աշխատավարձերին համահունչ չեն, և նկատում էին, որ բոլոր գործող դատավորների օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված վերինգի բացակայությունը, հատկապես՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ու Սահմանադրական դատարանի դատավորների մասով, խաթարում են դատական համակարգի բարեվարքությունը:

Ըստ իրավապաշտպան-փաստաբանների և այլ դիտորդների 2018 թ. քաղաքական անցմանը հաջորդած շրջանում և տարվա ընթացքում բազմաթիվ անգամներ դատարանները կալանքից ազատ են արձակել կամ մերժել են կալանքի տակ վերցնելու միջնորդությունները կապված նախկին պաշտոնյաների հետ, որոնց հանդեպ կոռուպցիայի, յուրացման ու այլ լուրջ մեղադրանքեր էին առաջադրվում: Այս փաստաբանները նկատում էին, որ հունիսին գրավով ազատ էր արձակվել նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ոստիկանության ներքին գործերի նախկին հրամանատար գեներալ լեյտենանտ Լևոն Երանոսյանն էլ ազատ էր արձակվել երկրից չբացակայելու ստորագրության դիմաց, երբ նրան ներկայացված էր պաշտոնեական լիազորությունները գերազանցելու մեղադրանք: Ի հակադրություն այս ամենի սակավ հայտնի մարդիկ երկար ժամանակ գտնվում էին նախնական կալանքի տակ:

Ապրիլի 20-ին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մի խումբ քննադատեց դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգման մեխանիզմները, որոնք հաստատվել էին Ազգային ժողովի կողմից մարտի 25-ին: Ըստ այդ հայտարարության անլուրջ էր բարեվարքության ստուգման խիստ սահմանափակ հնարավորությունը, որովհետև բարեվարքության ստուգում իրականացվելու էր միայն ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների համար, իսկ գործող դատավորների, ինչպես նաև դատախազների, քննիչների համար բարեվարքության ստուգում չէր նախատեսվում: Կառավարությունն արձագանքեց, որ մեխանիզմները թույլ կտան անցումն ապահովել աստիճանաբար:

Նախորդ ռեժիմի օրոք նշանակված Սահմանադրական դատավորների անկողմնակալության մասին լայն տարածում ստացած մտահոգություններից հետո Ազգային ժողովը հունիսին հաստատեց սահմանադրական փոփոխություններ, որոնց համաձայն 12 տարի և ավել Սահմանադրական դատարանում պաշտոնավարած դատավորներն անցնելու էին կենսաթոշակի, իսկ 12 տարվա ժամկետը չբոլորած դատավորները կարող էին շարունակել պաշտոնավարումը: Փոփոխությունների համաձայն Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը, որը լայնորեն ընկալվում էր որպես քաղաքական շահերին հավատարիմ, ստիպված եղավ զիջել նախագահությունը, սակայն շարունակեց պաշտոնավարել որպես դատավոր, քանի որ չէր լրացել պաշտոնավարման 12 տարին: Խորհրդարանը սահմանադրական փոփոխություններն ընդունեց Վենետիկի հանձնաժողովի առաջարկներն ստանալուց մեկ օր առաջ: Փոփոխություններն հիմնականում համահունչ էին Վենետիկի հանձնաժողովի առաջարկներին, սակայն չէր նախատեսվել անցումային շրջան դատավորների հեռացման համար: Սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովն հաստատեց սահմանադրական դատարանի երեք դատավորներին, չնայած քաղաքացիական հասարակության շրջանում կային մտահոգություններ, հատկապես՝ Երվանդ Խունդկարյանի վերաբերյալ և նրա մասին առկա էր բացասական գնահատական Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից:

Ըստ դիտորդների՝ վարչական դատարաններն համեմատաբար ավելի շատ ներքին անկախություն ունեին, սակայն կադրային պակաս կար, իսկ լսումների համար արդեն իսկ երկար հերթ էր գոյացել:

Իրավասու մարմիններն ապահովում էին դատական որոշումների կատարումը:

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով: Իրավապաշտպանները շարունակում էին մտահոգություն հայտնել այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվել են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դարձել:

Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի իրացրել այս իրավունքը:

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել: Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները, և օրենքը պահանջել է ըստ անհրաժեշտության ապահովել անվճար թարգմանություն ամբաստանյալների համար: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լուսմները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Պաշտպանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Ըստ իրավապաշտպան-փաստաբանների՝ խախտումներով ընթացած դատական մի վարույթի շրջանակում Forrights.am-ի հաղորդմամբ շուրջ մեկ տարի «Արմավիր» ՔԿՀ-ում նախնական կալանքի տակ գտնվող Տիգրան Բաղայանը սեպտեմբերի 23-ին՝ իր դեմ ներկայացված մեղադրանքների դեմ բողոքելու նպատակով հայտարարած հացադուլի 29-րդ օրն իր ոտնաթաթերը գամել էր հատակին: Մեկ այլ ՋԼՄ-ի հաղորդման համաձայն Բաղայանը ենթադրաբար գտել ու իր գյուղում վաճառել էր այլումինի հինգ թիթեղ: Հետագայում նա ձերբակալվեց ու նրան մեղադրում էին այլումինը գողանալու ու 15.000 դրամով (30 դոլարով) վաճառելու և հարևանից կանխիկ 10.000 դրամ (20 դոլար) գողանալու մեջ: Ըստ Բաղայանի փաստաբանի նրա դեմ որևէ ապացույց չկար, չկար որևէ վկա, և անգամ գողացված փողի ու այլումինի տերը չէր կարծում, որ հանցագործը Բաղայանն է: Ըստ նրա փաստաբանի ոստիկանները կասկածում էին նրան, քանի որ նախկինում դատված էր (գողության հետ առնչություն չունեցող արարք) և պայմանական էր կրել պատիժը: Սեպտեմբերի 25-ին ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Թաթուլ Զանիբեկյանը Բաղայանին մեղավոր ճանաչեց ու դատապարտեց չորս տարվա ազատազրկման:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատարանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք

տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել խնդրել պաշտպանության վկաների ներկայության ապահովումը: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ թվում և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել: Մարդու իրավունքների կազմակերպությունները նշում էին, որ բավարար չէին դատախազների անկողմնակալության ու հաշվետվողականության պահանջները, և չկային օբյեկտիվ չափանիշներ գլխավոր դատախազի թեկնածուների առաջադրման ու ընտրության համար:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները դատավճռի բողոքարկման իրավունք են ունեցել և հաճախ իրացրել են այդ իրավունքը: Մի դատաքննության շրջանակում, որը մեղադրյալի հանդեպ անարդարացի էր համարում անգամ տուժողի ընտանիքը, շարունակվում էր Կարեն Կունգուրցևի դեմ Դավիթ Հովակիմյանի սպանության փաստով հարուցված քրեական գործով վարույթը. գործը սկզբնապես հարուցվել էր 2013թ., իսկ 2018թ. Վճռաբեկ դատարանի որոշմամբ այն ետ ուղարկվեց ընդհանուր իրավասության դատարան, իսկ Կարեն Կունգուրցևը գրավով ազատ արձակվեց: 2015թ. Կարեն Կունգուրցևն արդարացվել էր, սակայն 2017թ. քրեական վերաքննիչ դատարանը բեկանեց որոշումը և վճռեց նրան դատապարտել յոթ տարվա ազատազրկման: Տուժողի ընտանիքը և Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան շարունակում էին պաշտպանել Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է Ազգային անվտանգության ծառայության պաշտոնյալի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներազդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղսագրվել է Կունգուրցևին: 2018թ. դատական վարույթի վերսկսումից հետո գործով հիմնական վկաներից երկուսը ներողություն խնդրեցին Կունգուրցևից և տուժողի հորից՝ վեց տարի առաջ իրավապահների ճնշման ներքո տված կեղծ ցուցմունքի համար, և ցուցմունք տվեցին, որն ըստ էության արդարացնում էր Կունգուրցևին:

Ընթացիկ դատական վարույթում ներգրավված դատախազը պնդեց, որ լսեն գործով անցնող բոլոր վկաներին, ինչը հետագա հապաղումների հանգեցրեց, քանի որ շատերը

երկրում չէին գտնվում: Ըստ Կունգուրցևի փաստաբանի սկզբնապես այս գործով զբաղվող երկու դատախազը չեն կարողացել նախաքննության ընթացքում քննչական ու դատական վարույթները ճիշտ տնօրինել, սակայն հետագայում անցել են ավելի բարձր պաշտոնների դատախազության համակարգում: Նրա գնահատմամբ դատախազներն անձնական շահագրգռվածություն ունեին գործն առաջ տանելու հարցում, որպեսզի խուսափեին իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելուց:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Վստահարժան հաղորդումներ երկրում քաղաքական բանտարկյալների կամ կալանավորվածների մասին չեն եղել:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, սակայն դատարանները լայնորեն ընկալվել են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները նաև հնարավորություն են ունեցել վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում: Ըստ փաստաբանների՝ ստորին ատյանի դատարանները չէին հետևում վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ-ի և սահմանադրական դատարանի նախադեպերին: Արդյունքում, առաջին ատյանի դատարանները շարունակել են գործել միևնույն իրավական սխալները:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով, սակայն ՄԻԵԴ-ի կողմից որոշումների կայացումից հետո այդ գործերով բովանդակային վերանայում չի կատարվում: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը, և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն դիտորդները պնդում են, որ որոշ դատավորներ հաճախ ԱԱԾ-ի և Ոստիկանության գաղտնալսման կամ հետևելու այլ միջնորդագրերը բավարարելիս չեն պահանջել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով: Մյուս կողմից, ըստ հաղորդումների այս իրավական պահանջը պահպանվել է ՀՔԾ-ի, Քննչական կոմիտեի և Պետական եկամուտների կոմիտեի միջնորդագրերի դեպքում:

Մարտի 31-ին Ազգային ժողովը փոփոխություն կատարեց Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքում՝ թույլատրելով բջջային հեռախոսի տվյալների օգտագործումը նոր կորոնավիրուսի դեպքերին նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով և պահանջեց հեռահաղորդակցության ընկերություններից հեռախոսագանգերի վերձանումները տրամադրել իշխանություններին: Իշխանություններն այդ տվյալներն օգտագործելու էին նոր կորոնավիրուսի վարակակիրների բացահայտման, մեկուսացման, նրանց ինքնամեկուսացումը պահանջելու կամ վարակակիրներին կամ նրանց հետ շփում ունեցած անձանց մշտադիտարկելու նպատակներով: Բուժաշխատողները պարտավոր էին իշխանություններին հայտնել «տվյալներ համաճարակի հետևանքով հիվանդության առկայության համար ստուգված (թեստավորված), վարակակիր, հիվանդության ախտանշաններ ունեցող, հիվանդացած, բուժվող և նրանց հետ շփում ունեցած (կոնտակտավոր) անձանց վերաբերյալ»:

Այս փոփոխություններն անձնական տվյալների գաղտնիության, ինչպես նաև հավաքագրված տվյալների անվտանգության ու ծրագրային ապահովում մշակողների ինքնության հետ կապված մտահոգությունների տեղիք տվեցին հասարակության ներսում և միջազգայնորեն: Սեպտեմբերի 23-ի Civilnet.am-ի հաղորդմամբ տվյալների հավաքագրումը կասեցվել է սեպտեմբերի 11-ին՝ արտակարգ դրության ռեժիմը դադարեցնելուն պես և խորհրդարանականները ծանուցում են ստացել ներկա լինել հավաքագրված թվային տվյալների ոչնչացմանը, որն օրենքի համաձայն պետք է կատարվեր արտակարգ դրության ռեժիմի վերացումից հետո երկու շաբաթվա ընթացքում:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի, այդ թվում և մամուլի ազատություն

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի, այդ թվում և մամուլի ազատությունը. թեպետ կառավարությունն ընդհանուր առմամբ հարգում էր այս իրավունքը, սակայն այն սահմանափակվել էր նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության և պատերազմի հետ կապված ռազմական դրության ժամանակահատվածներում:

Խոսքի ազատություն. Անհատներն ազատ քննադատել են կառավարությանը՝ առանց հաշվեհարդարից վախենալու: Ապրիլի 15-ին Ազգային ժողովը լրացում կատարեց քրեական օրենսգրքում՝ քրեականացնելով բռնություն գործադրելու հանրային կոչերը: Այս արարքը պատժվում է տուգանքով՝ 50.000-100.000 դրամի (100-200 դոլարի) չափով, կամ կալանքով՝ մինչև երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մինչև մեկ ամիս ժամկետով: Օրենքն ավելի խիստ է պաշտոնյաների նկատմամբ և նախատեսում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում: Մեռական կամ գենդերային ինքնությունն այդ դրույթի շրջանակում պաշտպանվող հիմքերի շարքում չեն:

Մամուլի ու լրատվամիջոցների, այդ թվում՝ առցանց լրատվամիջոցների ազատություն. Մարտի 16-ին նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության ռեժիմի առաջին ամսվա ընթացքում կառավարությունը սահմանափակումներ սահմանեց լրատվամիջոցների համար՝ վարչական տույժեր նախատեսելով համավարակի մասին այնպիսի գրառումներ ու

հրապարակումներ հրապարակելու համար, որոնք չէին արտացոլի կառավարության պաշտոնական աղբյուրների տվյալները: Ըստ կառավարության հիմնավորման՝ սահմանափակ էր արտակարգ դրության պայմաններում խուճապը և ապատեղեկատվության հնարավոր տարածումը կանխելու համար: Արդյունքում ոստիկաններն այցելում էին տարբեր լրատվամիջոցների խմբագրություններ և տուգանքների սպառնալիքով ստիպում հանել որոշ հոդվածներ:

Լրատվամիջոցների ներկայացուցիչները՝ մեղիա տիրույթի տեղական ու միջազգային դիտորդների հետ քննադատեցին այդ քայլը: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը նշեց. «Միայն իշխանությունների կողմից տրամադրվող տեղեկությունների հրապարակումը սահմանափակման խիստ միջոց է, որը կհանգեցնի մամուլի ազատության և տեղեկատվության հասանելիության անհամաչափ սահմանափակման»: Նմանօրինակ դիրքորոշում հայտնեց նաև «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը՝ նշելով, որ «տեղեկատվության վերահսկումը չի օգնում համաճարակի դեմ պայքարին այն սուկ նպաստում է բամբասանքների ու վախի տարածմանը»: Ապրիլի 13-ին կառավարությունը վերացրեց նոր կորոնավիրուսի հետ կապված մամուլի ազատության մասով կիրառված այս սահմանափակումները:

Մեպտեմբերի 27-ին մարտական գործողություններ սկսվելուց հետո կառավարությունը ռազմական դրություն հայտարարեց: Ռազմական դրության սահմանափակումների շարքում նախատեսված էր պահանջ, որ տեղի ՋԼՄ-ներն ու հեռարձակողները պետք է ռազմական գործողությունների մասին ներկայացնեն միայն կառավարության կողմից ապահովվող պաշտոնական տեղեկությունները: Ռազմական դրության մասին որոշման մեջ հոկտեմբերին կատարված լրացումներով արգելվեց հրապարակել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները քննադատող, հերքող, դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող հաղորդումներ:

Լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ չեն ապահովել քաղաքական կարծիքների բազմազանություն ու օբյեկտիվ լուսաբանում: Հեռարձակող լրատվամիջոցների և լրագրերի գերակշիռ մասն արտացոլում են իրենց սեփականատերեր հանդիսացող մասնավոր անձանց կամ խմբերի քաղաքական դիրքորոշումները և ֆինանսական շահերը, և դրանց մեծ մասն ըստ հաղորդումների կապ ունեն նախկին

իշխանությունների կամ խորհրդարանական ամենախոշոր ընդդիմադիր կուսակցության հետ: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրներից մեկը բնակչության մեծ մասի համար: Ըստ լրատվական որոշ դիտորդ կառույցների հանրային հեռուստաընկերությունը, որտեղ տարվա ընթացքում տեղի ունեցան ղեկավար կազմի փոփոխություններ, շարունակել է լրատվությունը մատուցել իշխանամետ դիրքերից: Մի շարք առիթներով անկախ մեդիա փորձագետները մտահոգություն են հայտնել հանրային հեռուստատեսության կողմնակալության դրսևորումների վերաբերյալ՝ պնդելով որ այդ կողմնակալությունն առավել ակնհայտ է եղել կարևորագույն քաղաքական բանավեճերի ու զարգացումների լուսաբանման հարցերում: Այնուհանդերձ, Հանրային հեռուստաընկերությունն առավելապես հավասարակշռված էր, բաց ու հասանելի նաև ընդդիմադիր ձայների համար և շարունակում էր լուսաբանել հասարակայնությանը հետաքրքրող հարցերի ավելի լայն շրջանակ, քան նախքան 2018թ. հեղափոխությունը:

Սոցիալական հարթակների օգտատերերն ազատորեն արտահայտել են իրենց կարծիքը նոր և նախկին կառավարությունների վերաբերյալ տարբեր սոցիալական հարթակներում: Սակայն տարվա ընթացքում շարունակել են կտրուկ ավելանալ սոցիալական ցանցերում կեղծ էջերի օգտագործումն ու մեդիա տիրույթը մանիպուլյացիաների ենթարկելու փորձերը: Ըստ լրատվական տիրույթի դիտորդ կառույցների կառավարությանը թիրախավորելու համար անհատների կողմից օգտագործում էին մանիպուլյացիոն այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ հիբրիդ կայքերը, հակասական բլոգերները, տրոլինգը, անանուն թելեգրամյան ալիքները և շինծու ֆեյսբուքյան խմբերն ու կեղծ նորությունները: Հատկապես շատ էր ապատեղեկատվությունը կապված նոր կորոնավիրուսին առնչվող հարցերի շուրջ, որի հետևանքով մի շարք լրագրողական հարթակներ ու տեղական կազմակերպություններ սկսեցին փաստերի ստուգման ավելի կուռ միջոցներ ձեռնարկել:

Երկրի սակավաթիվ անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց լրատվամիջոցներ, ինքնաբավ չեն և գոյատևում են միայն միջազգային դրամաշնորհների ու օժանդակության հաշվին և ունեն սահմանափակ եկամուտներ գովազդից ու բաժանորդագրման վճարներից:

Մեդիա ոլորտի ընկերությունների սեփականատերերի հարցում հիմնականում բացակայել է թափանցիկությունը: Հայաստանի Հանրապետության Բաց

կառավարման գործընկերության նախաձեռնության գործողությունների չորրորդ ծրագիրը (2018-20թթ.) ներառում է հանձնառություններ սեփականատերերի մասին տվյալների ապահովման վերաբերյալ: Հուլիսի 17-ի Ռադիոյի ու հեռուստատեսության մասին օրենքին փոխարինած Առդիովիզուալ լրատվամիջոցների մասին օրենքը մեղիա ոլորտի սեփականատերերի թափանցիկության մասով խթաններ չէր պարունակում:

Կառավարությունը պահպանել է դե ֆակտո մենաշնորհը թվային հեռարձակման մուլտիպլեքսի մասով, սակայն հեռուստաալիքների գերակշիռ մասը նախորդ իշխանությունների տեսակետներն է ներկայացրել: Մարզային տասը հեռուստաընկերություններ շարունակում էին փակվելու ռիսկի առաջ մնալ՝ պայմանավորված հեռուստալսարանի և գովազդատուների նվազեցմամբ: Ըստ մեղիա տիրույթի տեղական դիտորդ կառույցների հուլիսի 17-ի Առդիովիզուալ լրատվամիջոցների մասին օրենքը չէր ապահովում մասնավոր մուլտիպլեքսների ստեղծման իրատեսական ճանապարհ, չէր լուծում մարզային հեռուստաընկերությունների թվային հեռարձակման հարցը և չէր բարեփոխում հեռուստատեսային լիցենզիաների հնացած ընթացակարգերը:

Բռնություն և ոստնձգություններ. «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» տեղական ՀԿ-ի հաղորդմամբ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է լրագրողների նկատմամբ բռնության երկու դեպք: Մի դեպքում՝ հունիսի 16-ին ԱԱԾ շենքի մոտ տեղի ունեցած հրմշտոցի ընթացքում վնասված են ստացել լրագրողներ: «News.am» լրատվական կայքի թղթակից Լիանա Մարգայանը, «Tert.am»-ի լրագրող Անի Գևորգյանը, «Yerkir.am»-ի թղթակից Տաթևիկ Կոստանդյանը, «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Արթուր Հակոբյանը, «MegaNews.am» կայքի խմբագիր Մարգարիտա Դավթյանը նշում են, որ վնասվածք են ստացել ԱԱԾ-ի շենքի մոտ տեղի ունեցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանի կողմնակիցների անցկացրած բողոքի ակցիայի լուսաբանման ընթացքում: Տեղի մեղիա կազմակերպությունները դատապարտեցին իրենց մասնագիտական պարտականությունները կատարող ՁԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունը և պահանջեցին, որ ոստիկանությունը միջադեպի վերաբերյալ քննություն անցկացնի: Հաշվի առնելով, որ իրադարձությունները տեղի էին ունենում կորոնավիրուսի հետ կապված արտակարգ դրության պայմաններում, մեղիա կազմակերպությունները կոչ էին անում ՁԼՄ-ների ղեկավարներին՝ զերծ պահել իրենց աշխատակիցներին զանգվածային հավաքները լուսաբանելիս մարդկային կուտակումների կիզակետում գտնվելուց, իսկ դրա անհնարինության դեպքում տալ անվտանգությունը պահպանելու հստակ հրահանգներ:

Եղել են դեպքեր, երբ ներկայիս և նախկին պաշտոնյաները խոչընդոտել են կամ փորձել են խոչընդոտել լրագրողների աշխատանքին: Օրինակ՝ օգոստոսի 8-ին ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանը խոչընդոտել է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության նկարահանող խմբի աշխատանքներին, որը հաղորդում էր պատրաստում Սևանա լճի ափամերձ հատվածներում ապօրինի կառուցված մասնավոր շինությունների քանդման հետ կապված կառավարության ծրագրերի մասին: Գասպարյանը, որին արդեն մեղադրանքներ էր ներկայացված դիրքի չարաշահման, խարդախության, յուրացումների համար, իր մեքենան վարել է երկու լրագրողների ուղղությամբ ու գրեթե խփել է նրանց, երբ նրանք նկարահանումներ են արել ափամերձ այն հատվածում, որտեղ գտնվում էր նրա առանձնատունը: Նա սպառնացել է լրագրողներին՝ ասելով, որ «գյուլլելու է» ու «սատկացնելու է» նրանց, ապա հայհոյանքներով պահանջել է լրագրողներից իր առանձնատունը ցույց չտալ: Ոստիկանությունը քրեական գործ է հարուցել՝ լրագրողների աշխատանքին խոչընդոտելու մեղադրանքով:

Դեկտեմբերի 1-ին Ոստիկանությունն ըստ հաղորդումների Ռուսաստանի միջնորդական ջանքերով Հայաստանի և Ադրբեյջանի միջև ձեռք բերած համաձայնության դեմ անցկացվող բողոքի ակցիայի ժամանակ խոչընդոտել է լրագրողների աշխատանքին՝ փորձելով բերման ենթարկել «Երկիր մեդիա» ՀՀ-ի օպերատոր Հայկ Սուքիասյանին:

Եղել են նաև հաղորդումներ իրավապահների կողմից լրագրողներին ահաբեկելու վերաբերյալ: Օրինակ՝ հուլիսի 3-ին Ոստիկանությունն այցելել է նախկին իշխանության հետ կապ ունեցող «ԱրմՆյուզ» և «5-րդ ալիք» հեռուստաընկերությունների՝ նպատակ ունենալով վարչական տույժեր կիրառել նրանց դեմ, քանի որ այդ հեռուստաընկերությունների աշխատակիցները եթեր էին դուրս գալիս առանց դիմակի: Մեդիա տիրույթի դիտորդ կառույցները քննադատեցին այս գործողությունները՝ որակելով որպես իշխանության չարաշահում, հորդորեցին իրավապահներին զերծ մնալ լրատվամիջոցների աշխատանքին խոչընդոտելուց, առաջարկեցին մեղմել համավարակով պայմանավորված սահմանափակումները և կոչ արեցին ՋԼՄ-ներին չխախտել արտակարգ դրության կանոններն ու պահանջները՝ հաշվի առնելով հանրության ու իրենց աշխատակիցների առողջության պահպանման հարցում իրենց ունեցած դերը:

Զրպարտության/սուտ մատնության մասին օրենքներ. Մեդիա ոլորտի փորձագետները նկատել են, որ տարվա ընթացքում զրպարտող ու հեղինակագրկող

հրապարակումների համար օրենսդիրների, նախկին պաշտոնյաների ու այլ անձանց կողմից լրատվամիջոցների դեմ հարուցված գործերի թիվը նվազել է: Ըստ «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» տարվա առաջին ինն ամիսների ընթացքում 55 դատական հայց է ներկայացվել:

Ինտերնետի ազատություն

Կառավարությունը չի սահմանափակել կամ ընդհատել ինտերնետի հասանելիությունը կամ գրաքննել առցանց բովանդակությունը և չեն եղել արժանահավատ հաղորդումներ առանց համապատասխան իրավական հիմքերի կառավարության կողմից մասնավոր առցանց նամակագրությանը հետևելու վերաբերյալ:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների մասով կառավարության կողմից չեն եղել սահմանափակումներ և կառավարությունը բացահայտ աջակցել է ուսումնակրթական ազատությանը:

Դիտորդները քննադատում էին որոշ պետական պաշտոնյաների հանրային կրթական հաստատություններում կատարվող նշանակումներում նեպոտիզմ հանդես բերելու համար: Ադմկոտ դեպքերից մեկը Դիանա Գալոյանի նշանակումն էր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնում: Պնդումներ եղան նրա դոկտորական ատենախոսության հետ կապված գրագողության փաստերի մասին, որից հետո Բարձրագույն որակավորման կոմիտեն (գիտական աստիճաններ ու կոչումներ շնորհելու իրավասություն ունեցող պետական մարմին) բեկանեց նրան դոկտորի գիտական աստիճան շնորհելու մասին 2015թ. որոշումը: Նախորդ ռեկտորը հրաժարական էր տվել նմանօրինակ խնդիրների արդյունքում: Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Սմբատ Գոգյանը հավատացնում էր, որ կրթության փոխնախարարը հովանավորում էր Գալոյանին: Այս գործի հետ կապված Գոգյանը մայիսին հրաժարական ներկայացրեց, սակայն այն չընդունվեց: Օգոստոսի 17-ին կրթության նախարարությունը ետ կանչեց Գալոյանի դոկտորական ատենախոսության ու գիտական աստիճանի չեղարկման մասին որոշումը՝ դրանով իսկ վերացնելով ռեկտորի պաշտոնում նրան նշանակելու խոչընդոտը:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը, և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս ազատությունները, սակայն նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության և հակամարտության հետ կապված ռազմական դրության պայմաններում հավաքները սահմանափակվել են:

Խաղաղ հավաքների ազատություն

Խաղաղ հավաքների ազատությունը սահմանափակվել է մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ռեժիմի ընթացքում՝ նպատակ ունենալով կանխել նոր կորոնավիրուսի տարածումը: Սահմանափակումները գործում էին մինչև օգոստոսի 12-ը, որից հետո կառավարությունը հանեց հավաքների ազատության սահմանափակումը՝ թույլ տալով ցույցերի, երթերի ու հանրահավաքների անցկացումը պայմանով, որ մասնակիցները կրեն դիմակ և պահպանեն սոցիալական հեռավորություն:

Հավաքների ազատությունը սահմանափակվեց նաև ռազմական դրության ընթացքում, որը հայտարարվել էր սեպտեմբերի 27-ին՝ Ադրբեյջանի հետ մարտական գործողություններ սկսվելուց հետո: Ռազմական դրությամբ արգելք էր նախատեսվում հանրահավաքների համար: Թեպետ սահմանափակումները պաշտոնապես հանվել էին դեկտեմբերի 2-ին, սակայն դեկտեմբերի 21-ին ձերբակալվեց Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը՝ ըստ փաստաբանի անօրինական հանրահավաք կազմակերպելու մեղադրանքով: Առուշանյանը տեղի բնակիչներին կոչ էր արել արգելափակել Սյունիքի մարզի ճանապարհները՝ թույլ չտալու վարչապետի այցը մարզ, ինչի հետևանքով պաշտոնական այցը տեղի չունեցավ: Հաջորդ օրը Երևանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ձերբակալությունը ճանաչվեց ոչ օրինական և Առուշանյանն ազատ արձակվեց:

Նոյեմբերի 11-ից մինչև տարեվերջ ընդդիմությունը հանրահավաքներ ու բողոքի այլ ակցիաներ է անցկացրել Երևանում՝ վարչապետ Փաշինյանի հրաժարականի պահանջով: Մինչև դեկտեմբերի 2-ը, երբ դեռ գործում էր հավաքների արգելքը, ոստիկանությունը երբեմն բերման էր ենթարկում ընդդիմության առաջնորդներին ռազմական դրության պայմանները խախտելու համար: Թեպետ ոմանք պնդում էին, թե

այդ կալանավորումները քաղաքական շարժառիթներ ունեն, սակայն իրավապաշտպան ՀԿ-ներն առավելապես հերքում էին այդ պնդումները:

Ըստ «Հայկական հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի մշտադիտարկման զեկույցի 2019թ. հուլիսից մինչև հունիս ժամանակահատվածում հավաքների ազատության պաշտպանությունը նվազել է, եթե այն համեմատենք 2018թ. հուլիսից 2019թ. հունիս ընկած ժամանակահատվածի հետ: Ձեկույցը մատնանշում էր, որ ոստիկանության գործողությունները համահունչ չեն եղել հանդիպումների արգելքի կիրառման խստությանը և տարբերվել են կապված այն փաստից, թե ովքեր են եղել բողոքի կազմակերպիչները և ինչ հարցեր են առաջ քաշել: Ձեկույցում նաև առանձին հիշատակում կար այն մասին, ոչ որոշ հանրահավաքների կազմակերպիչներ ու մասնակիցներ շարունակել են ատելության խոսքի կիրառումը՝ թիրախավորելով անձի գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը կամ կրոնական հայացքները:

Ըստ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ 2018թ. ապրիլի առավելապես խաղաղ դեպքերի ժամանակ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման դեպքերի մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում առաջընթաց չկար:

Միավորումների ազատություն

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ ու օրենքներով և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այն: Օրենքի համաձայն դատարանում իրենց շահառուների օրինական շահը ներկայացնելու ՀԿ-ների իրավասությունը սահմանափակվում է միայն շրջակա միջավայրի պահպանության հարցերով: Այս սահմանափակումը հակասում է 2010 թ. Սահմանադրական դատարանի որոշմանը, որը թույլ է տալիս բոլոր հասարակական կազմակերպություններին դատարանում հանդես գալ որպես կողմ:

զ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը. կառավարությունն ընդհանուր

առմամբ հարգել է այս իրավունքները, սակայն նոր կորոնավիրուսի համավարակին արձագանքելու շրջանում այդ իրավունքները սահմանափակվել են:

Տեղաշարժ երկրի ներսում. Մինչև ապրիլի 23-ը ներքին տեղաշարժը սահմանափակված էր, միջմարզային ուղևորություններն արգելված էին, իսկ քաղաքից քաղաք գնալ թույլատրելի էր միայն որոշակի նպատակներով: Հաջորդիվ ներքին տեղաշարժի սահմանափակումները հանվեցին:

Տեղաշարժ երկրի սահմաններից դուրս. Փետրվարի 24-ին կառավարությունը փակեց երկրի սահմանն իրանի հետ՝ պայմանավորված նոր կորոնավիրուսի համաճարակով: Հայաստանը և Վրաստանը փոխադարձաբար սահմանները փակեցին մարտի 14-ին: Օդային ճանապարհով երկիր մուտք գործել կարող էին միայն քաղաքացի հանդիսացող անձինք և որոշ կատեգորիաների սակավաթիվ օտարերկրացիներ: Այս սահմանափակումները հանվեցին օգոստոսի 12-ին: Մուտքի սահմանափակումները և ցամաքային սահմանների փակ լինելն անդրադարձել է ապաստան հայցողների ու փախստականների վրա:

ե) Ներքին տեղահանված անձանց կարգավիճակը և վերաբերմունքը նրանց հանդեպ

2018թ. դեկտեմբերի դրությամբ Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոնի տվյալների համաձայն կա դեռևս մոտ 8.400 ներքին տեղահանված անձ (ՆՏԱ)՝ 1988-94թթ. տարիանված շուրջ 65.000 տնային տնտեսություններից: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները: Կառավարությունը չունեք թիրախային ծրագրեր ու ընթացակարգեր, որոնք կիրառեն ՆՏԱ-ների ապահով, կամավոր, արժանապատիվ վերադարձին, վերաբնակեցմանը կամ ինտեգրմանը տեղում: Ըստ կառավարության տվյալների աշնան ռազմական գործողությունների պատճառով տեղահանվածների թիվը կազմում էր մոտավորապես 100.000 հոգի, սակայն ըստ հաղորդումների նրանց մի մասը ետ է վերադարձել:

զ) Փախստականների պաշտպանություն

Իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և այլ մարդասիրական կազմակերպությունների հետ՝ ՆՏԱ-ներին, փախստականներին, վերադարձող

փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և խնդրո առարկա այլ անձանց աջակցության ու պաշտպանության հարցերում:

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Եղել են ծագման երկրի, ռասայական կամ կրոնական հիմքով պայմանավորված ոչ համակարգային խտրական դրսևորման մասին հաղորդումներ կապված ապաստան հայցողների դիմումների ընդունման ու կալանավորման հարցերի հետ, ինչպես նաև եղել են դժվարություններ կապված ինտեգրման հետ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում էին աշխատանք փնտրող օտարերկրացի միգրանտների նկատմամբ խտրական և կասկածամիտ վերաբերմունքի մասին:

Տարվա ընթացքում երկրի սահմանը ցամաքով կամ օդով հատելուց հետո անօրինական մուտքի համար ձերբակալվել է 7 օտարերկրացի: Չնայած օրենքի համաձայն ապաստան հայցողների համար չի նախատեսվում քրեական պատասխանատվություն ապօրինի սահմանահատման համար, իրավասու մարմինները պահանջել են, որ նրանք մնան կալանքի տակ մինչև իրենց դիմումի բավարարումը կամ կրեն պատժի մնացյալ մասը:

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում ներդրվեց ապաստանի էլեկտրոնային համակարգ: Թեպետ կալանքի տակ գտնվողների գործերի ընթացքը կասեցված էր, սակայն մյուս գործերին ընթացք տրվում էր: Ըստ անհրաժեշտության ապահովվում էր հեռավար թարգմանություն (մասամբ ֆինանսավորվում էր ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից) և ապաստանի հետ կապված դեպքերն ըստ հաղորդումների առավելապես արդար կերպով քննության էին ենթարկվում: Օրենքը հաշվի է առնում երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցողների և տրավմա վերապրածների առանձնահատուկ կարիքները և կալանավայրերում թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ: Օրենքն ընդհանուր առմամբ իրականացվում էր՝ ըստ առկա ռեսուրսների: Ծագումով ոչ-հայ փախստականները կարող են քաղաքացիություն ստանալ, որի համար պահանջվում է հանձնել թեստ՝ սահմանադրական գիտելիքների վերաբերյալ: Քաղաքացիության շնորհման նման դեպքեր հազվադեպ էին լինում:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ժամանակահատվածում առնվազն երկու դեպք է գրանցվել, երբ ապաստան հայցող անձանց Իրանի հետ սահմանային անցակետից ետ են ուղարկել: Տարեվերջի դրությամբ կալանավորված էին ապաստան հայցող 12 անձ, այդ թվում 4-ն իրանից էին, 2-ը՝ Ադրբեջանից:

Ապաստանի հետ կապված ընթացակարգերի թերություններից էին թարգմանիչների համար պետական ֆինանսավորման սուղ լինելը և համապատասխանելիությունը դիտարկող պաշտոնյաների պատրաստավածության ու կարողությունների հետ կապված բացերը՝ զուգորդված որակի ապահովման կայուն մեխանիզմների ու կադրերի մասնագիտական կատարելագործման բացակայության հետ: Դատական պրակտիկան շարունակում էր բարելավվել, սակայն ոչ հետևողականորեն. փախստականների ու ապաստանի մասին օրենքների շուրջ վերապատրաստումներ անցած դատավորների կայացրած որոշումներն ավելի լավ որակ ունեին, քան նման վերապատրաստում չանցած դատավորներինը: Քանի որ չկար համակարգ որոշակի գործեր մասնագիտացված դատավորների վարույթ ուղարկելու համար, ապաստանի հայցերի հետ կապված գործերը շարունակում էին հանձնարարել դատավորների, որոնք չունեին համապատասխան օրենսդրության խորը գիտելիքներ: Դատական վարույթի երկարատև տևողությունը պահպանվել է, քանի որ դատավորները շարունակում էին գերծանրաբեռնված լինել գործերով: Արդյունքները կախված էին առանձին դատավորների մոտեցումներից ու այս գործերով տարբեր դատավորների մոտ նույն հետևողական տրամաբանությունը չէր: Ընդհանուր առմամբ, դատարաններն ավելի շատ ուշադրություն են դարձրել ապաստանի դիմումների փաստական տվյալներին և նախորդ տարիների համեմատ առավել համակարգված կերպով են կիրառել ծագման երկրի մասին տեղեկությունները:

Իրավասու մարմինները երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին շարունակել են առաջարկել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ: Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մասով նույն իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները: Երկրում իրականացվող համապետական բարեփոխումներից շատերը, ինչպիսիք են սոցիալական ծառայությունների ավելացումը, կենսաթոշակների բարձրացումը, առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացումը կիրառելի են եղել նաև քաղաքացիություն ստացած փախստականների մասով:

Թեպետ փախստականի կարգավիճակի սահմանման հետ կապված ընթացակարգերի ու որոշումների կայացման գործընթացի որակը վերջին տասնամյակի ընթացքում բարելավվել է, սակայն մտահոգություններ են մնում ոչ առաքելական քրիստոնյա և ծագումով ոչ հայ կրոնական և սեռական որոշակի նկարագիր ունեցող անձանց ապաստան հայցելու գործերի որոշումների առնչությամբ:

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Աշխատատեղերի բացակայությամբ, հնարավորությունների դժվար հասանելիությամբ ու լեզվական արգելքներով պայմանավորված՝ շատ փախստականներ չունենին աշխատելու կամ կրթություն ստանալու հնարավորություն, քանի դեռ իրենց գործն իրավական վարությամբ էր գտնվում, թեպետ առկա էին այս իրավունքները պաշտպանող դրույթներ:

Փախստականներին տրամադրված կացարանները եղել են ոչ բավարար քանակի ու վատ պայմաններով, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էր մնալ փախստականների ամենամեծ խնդիրը: Նոր կորոնավիրուսի համավարակի շրջանում փախստականների կենտրոնի փակ կացարաններում (բնակելի հատված, որտեղ որոշ ապաստան հայցողների են տեղավորում) մարդիկ վախենում էին վարակի տարածումից, թեպետ տարվա ընթացքում կենտրոնում նոր կորոնավիրուսի դեպքեր չեն գրանցվել: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին վարձավճարի փոխհատուցման ծրագրից, որին աջակցում էին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը և սփյուռքի կազմակերպությունները: Իշխանությունների կողմից գործարկվել էր փախստականների ինտեգրման տուն՝ նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էին անվճար օթևան: Լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի, կրթության և օրենքով նախատեսվող ծառայությունների հասանելիության հարցերում:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ժամանակահատվածում ներքին տեղաշարժի սահմանափակումները և պետական հիմնարկներում դեմառդեմ սպասարկման դադարեցումը խոչընդոտներ ստեղծեց հիմնական ծառայությունների մասով այն անհատների համար, որոնց փաստաթղթերը ժամկետանց էին: Թեպետ կառավարությունը հայտնեց, որ ժամկետանց փաստաթղթերը կհամարվեն գործող փաստաթղթեր մինչև արտակարգ դրության ավարտը, սակայն պետական մարմիններին ցուցում չէր տրվել սպասարկում ապահովել ժամկետանց փաստաթղթերով, այդ թվում՝ բուժօգնության, սոցիալական պաշտպանության և կրթության մասով: Ծառայությունների հասանելիության հետաձգման հարցը կարգավորվեց այն բանից հետո, Միգրացիայի պետական

ծառայությունը հերթապահ պաշտոնյաներին հրահանգեց թողարկել փախստականի վկայականներ: Թեպետ փախստականներին ու ապաստան հայցողներին ցուցում էր տրվել դիմել աջակցության միջոցառումներին, որոնք կառավարությունը մշակել էր արտակարգ դրության ընթացքում մարդկանց աջակցելու համար, նրանցից շատերը տեխնիկական կամ այլ պատճառներով իրավասու չէին օգտվել աջակցության այդ միջոցառումներից: Նոր կորոնավիրուսի թեստավորում անցնելն ըստ հաղորդումների խնդրահարույց էր և որոշ անհատներ վճարում էին իրենց թեստերի համար և կային մարդիկ, որոնց թեստերի պատասխանները չէին ստացվում ու պահանջվում էր կրկնակի թեստավորում: Օգոստոսի 10-ին թեստի դրական պատասխան էր ստացվել 16 փախստականի համար (բնակվում էին բնակարաններում և ոչ թե ընդունման կենտրոնում): Կրթության հասանելիությունը շատ փախստականների համար դժվարացավ այն բանից հետո, երբ մարտից կառավարությունը կասեցրեց առկա ուսուցումը: Առցանց ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ սարքավորումների բացակայությունը լրացնելու համար ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը տրամադրեց 166 համակարգիչ-պլանշետներ տարվա ընթացքում հեռավար դասեր կազմակերպելու համար: Երեխաները կարող էին ուսումնական ծրագրերին հետևել հեռուստատեսությամբ:

Հիմնարար լուծումներ. Կառավարությունն ընդունել է փախստականներ վերաբնակեցման համար և երկրի տարածքում բնակվող փախստականներին առաջարկել է քաղաքացիություն ստանալու հնարավորություն: Միգրացիայի պետական ծառայությունը նաև առաջարկել է ինտեգրման ծրագրեր Արևմտյան Եվրոպայի երկրներից ինքնակամ վերադարձած կամ արտաքսված անձանց համար: Հունվարի 1-ի դրությամբ կար 1.319 փախստական, որոնք Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում փախուստի էին դիմել Ադրբեջանից 1980-ականների վերջին և 1990-ի սկզբին: 2019թ. նոյեմբերի կառավարությունը 1,5 միլիարդ ՀՀ դրամ (3,2 միլիոն ԱՄՆ դոլար) հատկացրեց Ադրբեջանից փախուստի դիմած 112 ընտանիքի մշտական բնակարանով ապահովելու համար: Բնակարանի հետ մեկտեղ նրանք նաև քաղաքացիություն ստացան և այլևս չէին դիտարկվում փախստական: Օգոստոսի դրությամբ 106 դիմում բավարարվել էր, իսկ 6-ը մերժվել էին: Գարնանը հաստատվեց ծրագրի երկրորդ տրանշը՝ հավելյալ 185 շահառուի համար:

Է) Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ պաշտոնական տվյալների քաղաքացիություն չունեցող անձանց թիվն օգոստոսի 10-ի դրությամբ կազմում էր 976 հոգի, մինչդեռ 2019թ. նոյեմբերի դրությամբ այդ թիվն ավելի քիչ էր՝ 929 հոգի: Այս թվի ավելացումը պայմանավորված է այլ երկրների,

հատկապես՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով Հայաստանի քաղաքացիությունից հրաժարվող անձանց թվի ավելացմամբ: Այս անձանց գտնվելու վայրը հայտնի չէր, քանի որ շատերն ըստ երևույթին մուտք էին գործել Ռուսաստանի Դաշնություն: Գնահատում առ այն, թե նրանցից քանիսն են ստացել այլ երկրի քաղաքացիություն, կատարված չէ: Իրավասու մարմինները հուլիսի դրությամբ որպես քաղաքացիություն չունեցող անձ էին որակում նաև Ադրբեջանից եկած շուրջ 1.400 փախստականներին:

Օրենքը նախատեսում է քաղաքացիության շնորհում հանրապետության տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. 2018թ. տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ինչին նախորդեց կարճ ու եռուն, սակայն ազատ ու մրցակցային ընտրաբաշավ, որտեղ ընտրապայքարի դուրս եկած բոլոր կողմերն ընդհանուր առմամբ ունեին հավասար հնարավորություններ: Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների ավելի քան 70 տոկոսը և խորհրդարանական տեղերի գերակշիռ մասը: Խորհրդարան անցան նաև «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները՝ համապատասխանաբար ստանալով քվեների 8.3 և 6.4 տոկոսը: ԵԱՀԿ/Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) 2018թ. նախնական և 2019թ. վերջնական զեկույցներում նշվում էր, որ «արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների ժամանակ... Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունն իրական մրցակցության

հնարավորություն է ընձեռել»: Վերջնական զեկույցում սակայն նշվում էր, որ թեպետ ընտրապայքարի մասնակիցների կողմից չեն եղել հաղորդումներ ընտրակաշառքի և ընտրական այլ խախտումների համակարգային փորձերի մասին, սակայն ոմանք պնդում էին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կարճաժամկետ պայմանագրեր է կնքել քարոզարշավի իրականացման աշխատանքներում ընդգրկված անձանց և քաղաքացիական դիտորդների հետ՝ հնարավոր է վերջիններիս ձայները գնելու նպատակով:

ԺՀՄԻԳ դիտորդները նշել էին, որ մրցակիցները «կարողացել են ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավները. լիովին պահպանվել են միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտվելու և տեղաշարժի հիմնարար ազատությունները»: Միննույն ժամանակ նրանք ընդգծում էին, որ քարոզարշավի ընթացքում նկատելի է եղել ապատեղեկատվության տարածումը, ինչպես նաև սոցիալական հարթակներում սադրիչ մտքերի փոխանակումը թեկնածուների միջև: Ընտրական գործընթացի վրա ստվեր նետած սակավաթիվ խնդիրներից դիտորդները նշել են, որ «քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով»: Օրինակ՝ կազմակերպչական այնպիսի ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, հաղորդակցության, փոխադրամիջոցների և անձնակազմի հետ կապված ծախսերը չեն համարվում ընտրական ծախսեր, և, հետևաբար կարող են չզեկույցվել՝ «խաթարելով հաշվետվական համակարգի արժանահավատությունը և ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերին հասանելի տեղեկատվության թափանցիկությունը»: ԵԱՀԿ դիտորդների կողմից մատնանշված այլ թերություններն առնչվում էին ընտրաբողոքների ներկայացման նեղ իրավական շրջանակին:

Հունիսի 18-ին Ազգային ժողովն ընդունեց օրենք ընտրական օրենսգրքում ու համապատասխան այլ օրենքներում փոփոխություն կատարելու մասին, որով տեղական ինքնակառավարման ընտրություններում մեծամասնական ընտրակարգին փոխարինեց համամասնական ընտրակարգը: Այս փոփոխությունները վերաբերում են 4.000 և ավել ընտրող ունեցող կամ բազմաբնակավայր համայնքներին: Այս փոփոխությունը կառավարության ու խորհրդարանական բոլոր երեք խմբակցությունների համագործակցության արգասիքն էր, որ նպատակ ուներ տեղական օղակում բարձրացնել քաղաքական կուսակցությունների դերն ու ընդլայնել նրանց մասնակցության ու կայացման շրջանակը:

Քաղաքական մասնակցությունը ժամանակ առ ժամանակ ստվերվում էր իշխանական «Իմ քայլը» խմբակցության և որոշ ընդդիմադիր կուսակցությունների անդամների

փոխադարձ անձնական վիրավորանքներով, որին երբեմն հաջորդում էր բռնություն: Օրինակ՝ մայիսի 8-ին Ազգային ժողովում բանավոր հակադարձումները բռնության հանգեցրին, և երբ «Իմ քայլը» խմբակցության անդամ Սասուն Միքայելյանը հարվածեց «Լուսավոր Հայաստան» ընդդիմադիր խմբակցության ղեկավար Էդմոն Մարությանին, պատգամավորների միջև քաշքշուկ ստեղծվեց: Վարչապետը դատապարտեց բռնության այս միջադեպը, սակայն մեղադրեց ընդդիմությանը՝ նշելով, որ նրանք սատրել են իշխանական խմբակցությանը և ծառայում են նախկին վարչակազմի շահերին:

Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Օրենքը չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Որևէ օրենք չի սահմանափակում կանանց կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, սակայն հասարակության նահապետական բնույթը խոչընդոտել է կանանց լայնամասշտաբ մասնակցությանը երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, ինչպես նաև հանրային հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում: Կանայք զբաղեցնում էին նախարարական պաշտոնների 7 տոկոսը, տեղական օղակի օրենսդիր մարմնի կամ ավագանու տեղերի 9 տոկոսը և խորհրդարանական ընտրովի տեղերի 23 տոկոսը: Երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր: Առաջին կին քաղաքապետն ընտրվեց 2018թ.:

2018թ. կայացած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ գեկույցներում նշվում էր, որ թեկնածուների ցուցակները բավարարել են օրենքով սահմանված գենդերային ներկայացվածության 25 տոկոսի շեմը և առաջադրված 1.444 ընդհանուր թեկնածուների 32 տոկոսը կանայք էին: ԵԱՀԿ-ը նշում էր, որ այս քվոտան, այնուամենայնիվ, չի երաշխավորում խորհրդարանում կանանց նույն ներկայացվածությունը, քանի որ մանդատների կեսը բաշխված է ըստ վարկանիշային ձայների: Քարոզչության միջոցառումներին կուսակցությունները հազվադեպ էին ներկայանում կին-թեկնածուներով. կանայք միայն երբեմն էին ինքնուրույն քարոզչություն իրականացնում, իսկ հանրահավաքների ժամանակ հազվադեպ էին հանդես գալիս որպես բանախոս: Կին խորհրդարանականները և կին պաշտոնյաները հաճախ առարկայական քննադատության փոխարեն բախվել են գենդերային վիրավորանքների:

Խորհրդարանում մեկական տեղ է նախատեսվում ամենամեծ բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ եզդիներ, քրդեր,

ասորիներ և ռուսներ: Խորհրդարանում չորս տեղ զբաղեցնում էին այս խմբերի ներկայացուցիչները:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ: 2018թ. մայիսի «Թավշյա հեղափոխությունից» հետո կառավարությունը քննություններ սկսեց, որոնք բացահայտեցին համակարգային կոռուպցիայի դրսևորումներ հանրային և մասնավոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Կառավարությունը հարուցեց բազմաթիվ քրեական գործեր նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյաների և նրանց ազգականների, պատգամավորների, նախկին նախագահների, ու մի քանի դեպքերում էլ դատական համակարգի անդամների ու նրանց ազգականների կողմից թույլ տրված ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, որտեղ խոսք էր գնում մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների մասին: Այս գործերից շատերը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էին, և պարբերաբար հաղորդումներ էին լինում նոր գործերի մասին: Կառավարությունը նաև կոռուպցիայի հետ կապված գործեր հարուցեց ընթացիկ կառավարության մի շարք պաշտոնյաների նկատմամբ:

Կոռուպցիա. Երկիրը ժառանգել է համակարգային կոռուպցիա բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ շինարարություն, հանքարդյունաբերություն, հանրային կառավարում, խորհրդարան, դատական համակարգ, գնումների գործընթաց, պետության կողմից տրվող աջակցություն: Կային պնդումներ պետական միջոցների յուրացման և կասկածելի գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավվածության մասին: Կոռուպցիայի դեմ պայքարը կառավարության համար շարունակում էր մնալ որպես թիվ մեկ առաջնահերթություն և կառավարությունը տարվա ընթացքում ձեռնարկում էր միջոցներ կոռուպցիայի վերացման ուղղությամբ: Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցները կառուցակարգային հիմքերի վրա դնելու նպատակով ընդունվում էին իրավակարգավորման միջոցներ, օրինակ՝ քաղաքացիական հայցերով գույքի բռնագրավումների մասին օրենքներ, բարեվարքության ստուգումներ, գույքի ու ակտիվների հայտարարագրման նոր ձևեր, բանկային գաղտնիքի մասին օրենքի փոփոխություններ: Կառավարությունը քրեական գործեր է հարուցել հարկային և մաքսային ծառայություններում, շրջակա միջավայրի

ու սոցիալական հարցերի նախարարություններում, խորհրդարանի քաղաքաշինական հանձնաժողովում ու դատական համակարգում:

Հուլիսի 17-ին Բարձրագույն դատական խորհուրդը բավարարեց սնանկության հարցերով դատավորներ Արա Կուբանյանին ու Գևորգ Նարինյանին կալանավորելու մասին Գլխավոր դատախազության միջնորդությունը: Նարինյանին ներկայացվել էին բազմակի մեղադրանքներ, այդ թվում՝ ապօրինի հարստացում, փողերի լվացում, գույքի ու ակտիվների հայտարարագրերում կեղծ տեղեկությունների ներկայացում, իսկ Կուբանյանը մեղադրվում էր պաշտոնական լիազորությունները չարաշահելու մեջ: Հուլիսի 21-ին Բարձրագույն դատական խորհուրդը կասեցրեց դատավորների լիազորությունները մինչ քննությունն ընթացքի մեջ էր:

Ըստ Գլխավոր դատախազության՝ հունիսի 30-ի դրությամբ իրավապահները և հարկային մարմինները բացահայտել են խախտումներ կապված յուրացումների, պաշտոնական լիազորությունների չարաշահման, ապօրինի հարստացման և կաշառքի հետ, որոնց հետևանքով պետությանը պատճառված վնասը կազմել է 129 միլիարդ ՀՀ դրամ (համարյա 267 միլիոն ԱՄՆ դոլար): Այս միջոցներից 25 միլիարդ ՀՀ դրամը (52 միլիոն ԱՄՆ դոլար) ըստ հաղորդումների վերադարձվել է պետական բյուջե, իսկ 26 միլիարդ ՀՀ դրամի (55 միլիոն ԱՄՆ դոլարի) ակտիվներ սառեցվել են կամ բռնագրավվել: ՀԿ-ները շարունակում էին մտահոգություն հայտնել այս գործընթացի ոչ բավարար թափանցիկության վերաբերյալ:

Տարվա ընթացքում նախկին պաշտոնյաների կողմից եղան հրապարակային հայտարարություններ պետությանն ակտիվները վերադարձնելու իրենց մտադրության մասին, որպեսզի ենթադրաբար խուսափեն քրեական հետապնդումից: Գործընթացը և չափանիշները, որով կառավարությունն ընդունում կամ բանակցում էր նման առաջարկները, շարունակում էին մնալ ոչ հստակ:

Հունիսին Պետական եկամուտների կոմիտեն հայտնեց, որ մի շարք քրեական գործեր են հարուցվել Միքայել Մինասյանի դեմ, որը նախկին նախագահ Սերժ Սարգսյանի փեսան է և նախկինում զբաղեցրել է նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնը և եղել է Վատիկանում Հայաստանի դեսպանը: Մարտին նրան մեղադրանք ներկայացվեց ապօրինի հարստացման, հայտարարագրերում կեղծ տվյալների ներկայացման և փողերի լվացման հոդվածներով: Պետական եկամուտների կոմիտեի հաղորդմամբ Մինասյանի ներկայացրած հայտարարագրերը մատնացույց էին անում հարստության նշանակալի և անբացատրելի ավելացում: Մինասյանը նաև մեղադրվում էր անձնական շահագրգռվածությամբ մի հիդրոէլեկտրակայանի համար արտոնյալ սակագնով էլեկտրաէներգիա վաճառելու

հնարավորությունն ստանալու մեջ, այն բանից հետո, երբ ի օգուտ նրա փոփոխություններ էին կատարվել կարգավորիչ դաշտում:

2019թ. դեկտեմբերին ԱԱԾ-ը կոռուպցիոն գործի շրջանակում ձերբակալեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի փոխնախարար Գևորգ Լոռեցյանին, որը վարչապետի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից էր: Ըստ ԱԱԾ-ի՝ Լոռեցյանը ղեկավարելով նախարարության սպորտի հարցերով զբաղվող թևը, կաշառքի դիմաց օգնել էր մի հայ գործարարի շահել սպորտային հագուստի ու մարզագույքի պետական գնման պայմանագրեր: Լոռեցյանի գործը սեպտեմբերին ուղարկվել էր դատարան, և տարեվերջի դրությամբ նա դեռ գտնվում էր նախնական կալանքի տակ, իսկ դատաքննությունն ընթացքի մեջ էր:

Ֆինանսական հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր. սրանք ինտերնետում մասնակիորեն հասանելի են եղել հանրությանը: 2019թ. նոյեմբերին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին փոխարինած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) իրականացնում է հայտարարագրերի վերլուծություն:

ԿԿՀ-ը լիազորությունները ներառում են հանրային պաշտոններում նշանակվող անձանց, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի անդամների, դատախազների և քննիչների թեկնածուների բարեվարքության ստուգումը, սակայն այս մարմնի գործառույթները խորհրդատվական բնույթ ունեն: ԿԿՀ-ը նաև աջակցում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի իրականացմանը:

Տարիներ շարունակ բազմաթիվ պաշտոնյաներ՝ դատավորներ, պատգամավորներ և նրանց ամուսինները հայտարարագրել են եկամուտների ու ակտիվների անբացատրելի մեծ գումարներ, այդ թվում՝ մեծ անձնական նվիրատվություններ և փոխառություններից ստացվող միջոցներ: 2018թ. կառավարությունում տեղ գտած փոփոխություններից հետո իրավասու մարմինները սկսեցին մի քանի քննություններ՝ կապված հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների կամ անբացատրելի հարստության փաստերով: 2019թ. հոկտեմբերին կառավարությունն ընդունեց հակակոռուպցիոն ռազմավարությունը, որն ի թիվս այլ գործողությունների նախատեսում է մինչև 2021թ. ստեղծել առանձին իրավապահ մարմին, որը կոչվելու է

Հակակոռուպցիոն կոմիտե, ինչպես նաև մասնագիտացված կոռուպցիոն գործերի դատարաններ:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

2018թ. կառավարության ղեկավար կազմի փոփոխությունների արդյունքում պետական պաշտոններում հայտնվեցին քաղաքացիական հասարակության որոշ գործիչներ: Մյուսները սակայն շարունակում էին իրենց հսկիչ գործառնությունը՝ ուշադրության տակ պահելով կառավարության գործունեությունը: Մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային խմբերն ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Պետական պաշտոնյաներն ինչ-որ չափով համագործակցում ու արձագանքում էին նրանց դիրքորոշումներին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կառավարության փոփոխությունը դիտարկում էին որպես առավել սերտ համագործակցության հնարավորություն: Սկզբնապես ձևավորված մեծ ակնկալիքներն այնուհանդերձ հանգեցրին քաղաքացիական հասարակության կողմից կառավարության բարեփոխումների հանդեպ աճող քննադատության, հատկապես՝ իրավապահ ու դատական համակարգերի մասով, որտեղ ըստ որոշ դիտորդների՝ բարեփոխումների դանդաղ ընթացքը ոչ միայն թույլ էր տալիս նախորդ ռեժիմի ներկայացուցիչներին վայելել անպատժելիությունը նախկինում գործած հանցանքների համար, այլ նաև նրանց հնարավորություն էր տալիս վերախմբավորվել ու բարեփոխումները հետ մղելու փորձ կատարել: Հունիսի 23-ին մարդու իրավունքների ու քաղաքացիական հասարակության մի շարք այլ հեղինակավոր կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ կոչ անելով կառավարությանն անհապաղ գնահատել նախկինում կատարված մարդու իրավունքների խախտումներն ու իրականացնել համակարգային փոփոխություններ՝ ապահովելու արդարադատության իրականացումը, իշխանության ճյուղերի տարանջատումը, դատական համակարգի անկախությունը և խորհրդարանական վերահսկողությունը:

Կար իրավապաշտպան ու այլ քաղաքացիական կազմակերպությունների ու անհատապես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց արատավորման, նրանց հանդեպ ընդհուպ մինչև մահվան սպառնալիքներ հնչեցնելու միտում, որը կտրուկ ավելացել էր 2019թ. և շարունակում էր արագ տեմպերով աճել նաև տարվա ընթացքում: Սպառնալիքներ էին ստացել նաև ժողովրդավարական բարեփոխումները խթանող որոշ լրագրողներ: Այսօրինակ ահաբեկումները մի քանի ձևով էին դրսևորվում: Առնվազն երկու դեպքում իրավապաշտպանների հանդեպ սպառնալիքներն ու նրանց արատավորման քայլերը եղել են պետական պաշտոնյաների կողմից: Նոյեմբերի 10-ին հարձակում եղավ «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի և «Բաց հասարակության հիմնադրամների» հայաստանյան գրասենյակի վրա, նոյեմբերի 13-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վրա: ՀՆ-ների անդամների կողմից հաղորդումներ եղան անձնապես իրենց ուղղված սպառնալիքների թվի ավելացման մասին, իսկ առցանց օգտատերերը հորդորում էին հարձակումներում թիրախավորել անձնակազմին և «ոչ սոսկ գրասենյակները»: Դեկտեմբերին մի խումբ երիտասարդներ մուտք էին գործել «Հողված 3 ակումբ» (կազմակերպությունը զբաղվում է մարդու իրավունքների խթանման ու այդ հարցերի շուրջ իրազեկում ապահովելու հարցերով), որտեղ ուղիղ միացմամբ վիրավորել ու ահաբեկել էին անձնակազմին: ՀԿ-ների անդամների հաղորդումների համաձայն իրենց պաշտպանության համար շատ բան չէր արվում: Ահաբեկումը նաև իրականացվում է առցանց տրոլինգով զբաղվողների, լրատվամիջոցների, հերյուրանքներ տարածող նորահայտ հարթակների, ազգայնական խմբերի կողմից, որոնցից շատերը կապեր ունեն նախորդ իշխանությունների հետ և ըստ որոշ տեղացի փորձագետների՝ ռուսական դերակատարների հետ: Հատկապես թիրախավորվում էին մարդու իրավունքների խթանմամբ, կանանց ու երեխաների հիմնահարցերով զբաղվողները և ավելի խորն իրավապահ ու դատական բարեփոխումներ պահանջողները և հատկապես՝ «Բաց հասարակության հիմնադրամները»:

Ըստ քաղաքացիական հասարակության հաղորդումների ԱԱԾ-ն անհանգստացրել է «Մարդու իրավունքների եզրիական կենտրոն» ՀԿ-ի անդամներին և քրեական գործ է հարուցվել այնպիսի նյութեր հիման վրա, որոնք իրավաբանները գնահատել են որպես հիմնավորումից զուրկ: Դեկտեմբերի 5-ին «ՎԵՏՕ» շարժումը, որը դեմ է «Բաց հասարակության հիմնադրամներին», հրապարակեց մի տեսանյութ, որտեղ արատավորում էր բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպությունների և նույն օրն այդ տեսանյութը հեռարձակվեց «ԱրմՆյուզ» հեռուստաընկերության եթերում (հեռուստաալիքը պատկանում է ընդդիմությանը):

Իրավապաշտպանների ու առավել ընդգրկուն քաղաքացիական հասարակության նկատմամբ չկար ամուր պետական պաշտպանություն, սակայն կառավարության կողմից մերթընդմերթ քաղաքացիական հասարակության նկատմամբ հարձակումներ հետ մղելու ջանքեր էին իրականացվում: Դեկտեմբերի 29-ին խորհրդարանի քվեարկությամբ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը՝ անհանդուրժողական հայտարարություններ թույլ տալու պատճառով, գրկվեց Ազգային ժողովի Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահի պաշտոնից: Դեկտեմբերի 30-ին ՄԻՊ-ը նկատեց, որ ավելացել է քաղաքացիական հասարակության լայն շրջանակներին ուղղված «վիրավորանքների» թիվը և կառավարությունը կոչ արեց՝ պաշտպանել նրանց:

Ատելության արշավների հետևանքով ավելի ու ավելի շատ մտավորականներ ու հասարակական կարծիք ձևավորողներ առավել դժկամությամբ են հրապարակավ, հատկապես՝ առցանց տիրույթում բարձրաձայնում իրենց կարծիքն ու դիրքորոշումը: Արդյունքում նվազել է կառուցողական դիսկուրսը մարդու իրավունքների ու այլ կարևոր հարցերի շուրջ: Կառավարությունն օրենք ընդունեց բռնության հրապարակային կոչերը քրեականացնելու մասին: Այնուհանդերձ, այն արդյունավետ միջոցներ չի ձեռնարկում կանխելու քաղաքացիական հասարակության դերակատարների հետզհետե մեծացող մարզինալացումը: Ընդհակառակը, որոշ դեպքերում պաշտոնյաների հանրային մեկնաբանությունները խորացրել են խնդիրը:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների չարաշահումներից պաշտպանելու համար: ՄԻՊ գրասենյակը բարելավել է մարզերի հետ կապն ու հաղորդակցումը և համագործակցությունը մարզային իրավապաշտպան կազմակերպությունների հետ: Գրասենյակը շարունակում էր հայտնել, որ զգալիորեն ավելացել են քաղաքացիների բողոքներն ու այցերը, ինչը պայմանավորված է հանրության ակնկալիքներով ու կառույցի հանդեպ ունեցած վստահությամբ: 2019թ. դեկտեմբերին կառավարությունն ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրը» և գործարկեց e-rights.am հարթակը՝ որպես հանրային վերահսկողության գործիք:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություն. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարության պարագայում գործում են բռնաբարության ընդհանուր հոդվածները: Ընտանեկան բռնության քրեական հետապնդումն իրականացվում է բռնության ընդհանուր հոդվածներով, իսկ պատիժը կախված է մեղադրանքից (սպանություն, մարմնական վնասվածքներ պատճառել, թեթև մարմնական վնասվածքներ հասցնել, բռնաբարություն և այլն): Իրավասու մարմիններն ընտանեկան բռնության մասին պնդումների գերակշիռ մասի դեպքում արդյունավետ քննություն կամ քրեական հետապնդում չեն իրականացրել: Կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնությունը լայն տարածում ունեւր և առավել սրվեց պայմանավորված նոր կորոնավիրուսի հետ կապված տեղաշարժի սահմանափակումներով: Ըստ որոշ պաշտոնյաների քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության սահմանման բացակայությունը խոչընդոտել է ընտանեկան բռնության դեմ պայքարելու նրանց կարողություններին:

Եղել են հաղորդումներ, որ սեռական ու ընտանեկան բռնության դեպքերում ոստիկանությունը, հատկապես Երևանից դուրս, դժկամությամբ է միջոցներ ձեռնարկել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը: Ըստ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի՝ սեռական բռնության գործերի քննությունը՝ գաղտնիության, քննիչների կողմից նրբանկատության կամ հարցաքննությունների քանակով ոչնչով չէր տարբերվում մյուս գործերով վարույթներից և տուժածները ստիպված էին բազմիցս ցուցմունք տալ կամ այլ կերպ մասնակցել հարցաքննությանը, այդ թվում և մեղավորի հետ առերեսմանը: Բռնաբարության մասին հաղորդումների հիման վրա անցկացվող ստանդարտ դատաբժշկական փորձաքննության մեջ փորձագետն ըստ հաղորդումների նաև արձանագրում էր՝ արդյոք փորձաքննվողը կույս էր: Գործող օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր, իսկ կառավարության կողմից չի ձևավորվել այս հանցանքներով զբաղվող բավարար քանակությամբ կին ոստիկանների և քննիչների կադրային բազա այս հանցագործությունները պատշաճ հասցեագրելու համար:

Ըստ «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի՝ նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ժամանակահատվածում երկրում ավելացել են ընտանեկան բռնության դեպքերը. փորձագետներն այս ավելացումը մասամբ վերագրում են սոցիալական մեկուսացմանը: Օգնության համար դիմելն ամոթալի երևույթ համարելու համոզմունքը և համավարակի շրջանում աջակցության որոշ ծառայությունների անհասանելի լինելն առավել վատթարացրել է իրավիճակը: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան գրանցել է ընտանեկան բռնության թեժ գծով ստացվող զանգերի ավելացում ու նաև նկատում էր, որ հանրային տրանսպորտի շահագործման արգելքն արտակարգ դրության ընթացքում խիստ դժվարացրել է կանանց այցելությունները ոստիկանական տեղամասեր կամ աջակցության կենտրոններ: Մի դեպքում կինն առանց գումարի փախուստի էր դիմել 25 տարի իր հանդեպ բռնացող ամուսնուց և փողոցում մոտեցել ու օգնություն էր խնդրել ոստիկանից: Ոստիկանն ուղղակի ցույց էր տվել ոստիկանության ճանապարհը՝ առանց առաջարկելու որևէ օգնության տեղ հասնելու հարցում: Կինը կարողացել էր ի վերջո հասնել կացարան այն բանից հետո, երբ համոզել էր տաքսու վարորդին օգնել իրեն: Ըստ Կոալիցիայի այս միջադեպն ընդգծում է ոստիկանության համակարգում, հատկապես՝ փողոցներում պարեկող ոստիկանների համար նրբանկատության ու զգայունության հարցերի շուրջ ուսուցումների ու ուղղորդման մեխանիզմների մասով ավելի անելու անհրաժեշտությունը:

Տարվա ընթացքում ընտանեկան բռնության մի շարք գործեր մեծ ուշադրության արժանացան՝ հանգեցնելով ընտանեկան բռնության դեմ ուղղված օրենսդրության խստացման կոչերի: Մարտի 5-ին լրատվամիջոցները հաղորդեցին, որ Գյումրիում մի կին էր մահացել զուգրնկերոջ կողմից ծեծի ենթարկվելու հետևանքով: Նա ծեծի էր ենթարկել նաև կնոջ 13-ամյա աղջկան, որը բազմակի վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց ու երկար ժամանակ պահանջվեց, մինչ նա կվերականգնվեր: Հիվանդանոցում մահացած կնոջ դստերն այցելելու ժամանակ վարչապետ Փաշինյանը նկատեց. «Շատերս ենք ցավում այս աղջնակի և նրա սպանված մայրիկի համար, բայց եկեք ի վերջո խոստովանենք, որ այս աղջնակն ու նրա մայրը զոհ են նաև այն մտայնության, թե բռնությունն ընդհանրապես և կանանց նկատմամբ բռնությունը՝ մասնավորապես, կարող է ունենալ որևէ արդարացում»:

Գենդերային հավասարության դիրքերից հանդես եկող ակտիվիստներն ու ՀԿ-ները հաճախ ատելության խոսքի թիրախում են հայտնվել և քննադատության են ենթարկվել «ավանդական հայկական ընտանիքը» ենթադրաբար խարխիլելու և «արևմտյան արժեքներ» տարածելու համար: Հուլիսի 7-ին ոստիկանության մի նախկին աշխատակից, որը նաև հաշվառված էր որպես ընտանեկան բռնություն թույլ տված

անձ, քաղաքացիական գործի լսումից հետո «Կանանց աջակցության կենտրոն» ՀԿ-ի փաստաբանի ու աշխատակիցների վրա հարձակում գործեց՝ հնչեցնելով բանավոր վիրավորանքներ: Ըստ ՀԿ-ի՝ չկա կենտրոնի աշխատակիցներին պաշտպանելու կամ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու որևէ իրավական միջոց:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին օրենքով տրված նեղ սահմանումները թույլ չեն տվել, որ բռնությունից տուժածներն ըստ օրենքի պաշտպանություն կամ օժանդակություն ստանան, եթե նրանք ամուսնացած չէին կամ զուգրնկերոջ հետ համատեղ չէին բնակվում: Տարվա ընթացքում կառավարությունը շարունակել է աջակցել երկրում գործող ընտանեկան բռնության գոհերի աջակցության կենտրոններին:

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն այն կոնկրետ չի արգելում սեռական ոտնձգությունները: Աշխատավայրում գրանցվող սեռական ոտնձգությունների հետ կապված չկան պատասխանատվության քրեական կամ քաղաքացիական միջոցներ: Դիտորդները կարծում են, որ աշխատավայրում և քաղաքական դաշտում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեին և չէին ձեռնարկվում համարժեք միջոցներ կառավարության կողմից, և չկար լիարժեք գործող համընդգրկուն աշխատանքային տեսչություն կամ որևէ այլ հարթակ, ուր կարող էին ներկայացվել այս ոտնձգությունների մասին հաղորդումներ:

Բնակչության թվի վերահսկողության հարկադրանք. Չեն եղել հաղորդումներ կառավարության իրավասու մարմինների կողմից հարկադրաբար հղիությունն ընդհատելու կամ ոչ կամավոր բեղմնականիսման կիրառման մասին:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության, զբաղվածության և վարձատրության հարցերի հետ կապված: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում: Օրենքի չի արգելում սեռով պայմանավորված խտրականությունը վարկերի հասանելիության մասով:

Սոցիալ-տնտեսական գործոնները, կանանց կենցաղային պարտականությունները, ինչպես նաև առաջնորդման հստություններ ձեռք բերելու հնարավորությունների բացակայությունը սահմանափակել է կանանց մասնակցությունը քաղաքականության

մեջ: Կանանց համար նմանատիպ սահմանափակող ազդեցություն է ունեցել նաև երկրի քաղաքականության հիմք հանդիսացող ոչ պաշտոնական ցանցերի անհասանելիությունը, ուր գերիշխում են տղամարդիկ: Կանայք չունենին հովանավորներ ու ֆինանսական միջոցներ քաղաքական կարիերա ձևավորելու համար: Նույնիսկ ընտրվելու դեպքում կին քաղաքական գործիչների տեսանելիությունը հանրային տիրույթում սահմանափակ էր: Կին քաղաքական գործիչների ու պաշտոնյաների հանդեպ եղել է խիստ արտահայտված աստելության խոսք՝ թիրախավորելով նրանց գենդերային պատկանելությունը:

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական ընտրություն. Չնայած օրենսդրական փոփոխություններին, որոնք արգելում էին նման պրակտիկան ու դրան առնչվող հանրային իրազեկման արշավները, նորածինների մասին տվյալները շարունակում էին մատնացույց անել աղճատված հարաբերակցություն: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի ծնվելու պահին տղա-աղջիկ հարաբերակցությունը 2019թ. կազմում էր 110-100, որը 2018թ. 112-100 հարաբերակցության համեմատ փոքր-ինչ բարելավված էր: Կանանց իրավունքների հարցերով զբաղվող խմբերը կարծում էին, որ պտղի սեռի ընտրության պրակտիկան երկրում առկա գենդերային անհավասարության առավել ընդգրկուն խնդրի հետ է կապված: Ըստ «Կովկասի հետազոտական ռեսուրս կենտրոնների» փետրվար-մարտ ամիսներին կատարած տնային տնտեսությունների հետազոտության՝ առաջին անգամ հարցվածների կեսից ավելին (55 տոկոսը) մատնացույց են արել, որ երեխայի սեռի մասով որևէ նախապատվություն չունեն, եթե ընտանիքում կա մեկ երեխա, իսկ 34 տոկոսը նշել էր, որ կնախնտրեին, որ երեխան տղա լինի: Այս թվերը նշանակալիորեն տարբերվում են 2010թ. այս նույն հարցին տրված պատասխաններից, երբ հարցվածների 54 տոկոսը նախընտրում էր տղա, իսկ 35 տոկոսի համար «եական չէր»:

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից: Կա կենտրոնացված համակարգ, որի միջոցով գեներացվում է ծննդյան մասին բժշկական տեղեկանք՝ գրեթե անհնար դարձնելով ծննդյան գրանցումից խուսափելը: Ծնունդների չգրանցման դեպքեր հիմնականում տեղ են գտել եզրիական և քրդական համայնքներում, որտեղ ընդունված են տնային ծնունդները:

Կրթություն. Թեպետ կրթությունն անվճար է և պարտադիր մինչև 12-րդ դասարան, սակայն գործնականում այն չի կիրառվել համընդհանուր կերպով: Կարիքավոր ընտանիքների և համայնքների երեխաների և հաշմանդամություն ունեցող

երեխաների համար հասանելի չեն եղել վաղ տարիքի կրթական ծրագրերը՝ չնայած նախադպրոցական կրթության շրջանակն ընդլայնելու կառավարության ջանքերին: Նախադպրոցական կրթությունից օգտվել են երեքից հինգ տարեկան երեխաների կեսից մի փոքր ավելը, ընդ որում այդ թիվն առավելապես ցածր է եղել գյուղական բնակավայրերում: Ներառական նախադպրոցական կրթություն ապահովվել է միայն մայրաքաղաքում գործող նախակրթարաններից մի քանիսում:

Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մոլդկանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է իններորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: Ողջ երկրում ընդամենը մի քանի դպրոց կա, որտեղ կրթության հիմնական ու միջնակարգ օղակներում դասավանդվում է եզդիներենը, ասորերենը, քրդերենն ու հունարենը: Այս առարկաները պաշտոնական ուսումնական պլանում ներառված չեն և որևէ կերպ չեն կարգավորվում: Եզդի ծնողները մասնավորապես շարունակում էին բողոքել, որ դասերը որևէ ստանդարտի չէին համապատասխանում ու մեծապես անարդյունավետ էին:

2019թ. դեկտեմբերին ՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոմիտեին ներկայացված զեկույցի համաձայն՝ եզդի երեխաները մանուկ հասակում խոսում են իրենց մայրենի լեզվով և դպրոց գնալու պահին հայերեն չեն իմանում կամ վատ են խոսում հայերեն: Եզդիական գյուղերի գերակշիռ մասում չկան նախակրթարաններ, ինչը խնդիրներ է ստեղծում եզդի երեխաների համար, որոնք դպրոց գնալով ետ են մնում իրենց հայախոս դասընկերներից:

Նոր կորոնավիրուսի գլոբալ համավարակը կրճատեց կրթության հասանելիությունը և առավել սրեց առկա անհավասարությունները: Հարցումները ցույց են տալիս, որ դպրոցահասակ բնակչության ավելի քան 10 տոկոսն ամենայն հավանականությամբ դուրս կմնա կրթական գործընթացներից՝ պայմանավորված տեխնիկական միջոցների կամ ինտերնետի անհասանելիությամբ ու տեխնիկային տիրապետող ուսուցիչների բացակայությամբ: Կառավարությանն ուղղված հանրային քննադատություններում նշվում էր, որ չեն եղել առցանց դասավանդման կամ վիրտուալ ուսուցման բավարար այլընտրանքներ, կառավարությունը չի կարողացել բոլոր սովորողներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողներին, հավասարապես ներառել կրթական գործընթացներում: Կառավարությունը ջանում էր բացերը շտկել՝ առաջարկելով վերապատրաստումներ ուսուցիչների համար, հայթայթելով միջոցներ տեխնիկական

միջոցներ ձեռք բերելու համար և հավելյալ դասեր կազմակերպելով ամռանը, սակայն այս ջանքերը բավարար չէին ուսումնառության բացերը շտկելու համար:

Մեյսմոակտիվ տարածքներում ամեն երեք երեխայից երկուսը սովորում են այնպիսի դպրոցական շենքերում, որոնք չեն բավարարում սեյսմակայունության պահանջներին: Այս խնդիրը լուծելու համար կառավարությունն ապահով դպրոցական շենքերի նոր ծրագիր սկսեց 2019թ. և ֆինանսավորում հատկացրեց գյուղական կամ հեռավոր բնակավայրերում փոքր չափսերի սեյսմիկ ստանդարտներին համապատասխանող 22 նոր դպրոցների կառուցման համար:

2019թ. մարտին ՄԻՊ գրասենյակը ներկայացրեց երկրի 121 դպրոցներում և 80 նախակրթարաններում ջրի ու սանիտարահիգիենիկ պայմանների մշտադիտարկման արդյունքները՝ մտահոգություն հայտնելով կրթօջախներում վատ սանիտարահիգիենիկ պայմանների ու դրանց գերակշիռ մասում հասանելի սանհանգույցների բացակայության վերաբերյալ:

Երեխաների նկատմամբ բռնություն. Ըստ դիտորդների՝ երեխաների հանդեպ բռնությունների դեմ պայքարը համարվել է առաջնահերթ կառավարության կողմից և քայլեր են ձեռնարկվել դրա դեմ, չնայած շարունակվել են հաղորդումները երեխաների դեմ բռնության վերաբերյալ ու շարունակում էին բացել մնալ օրենսդրության մեջ և պրակտիկայում: Օգոստոսի վերջին լրատվամիջոցներում հաղորդում եղավ, որ մի տնից յոթ երեխա է հիվանդանոց տեղափոխվել, որոնցից երկուսն ուժեղ ծեծի էին ենթարկված, իսկ մյուսների մոտ սննդային թունավորում էր: Երեխաներից մեկը՝ 6-ամյա տղան, ստացած վնասվածների պատճառով հիվանդանոցում մահացավ:

Ըստ դիտորդների հոգեբանական ու ֆիզիկական բռնությունը որպես դաստիարակչական միջոց լայնորեն կիրառվում է թե՛ տղաների, ու թե՛ աղջիկների նկատմամբ, ու երկրում չկային պետական աջակցությամբ իրականացվող ծնողական խնամքի դրական փորձի ուսուցման ծրագրեր: Անուղղակի տվյալները ցույց են տալիս, որ դպրոցներում բավականին տարածված է բռնությունը հասակակիցների միջև և չկան մեխանիզմներ դրան հակազդելու համար: Գենդերային անհավասարությունն ու կարծրատիպերը նպաստել են և՛ աղջիկների, և՛ տղաների նկատմամբ բռնությանն ու խոչընդոտներ են ստեղծել տուժողների համար՝ արդարության հասնելու հարցում: Երեխաների պաշտպանության համակարգում ուղղորդումների ու հաղորդումներ տալու հետ կապված բարդ կարգավորումների, ինչպես նաև համակարգի ներսում պարտականությունների և պատասխանատվությունների անհասկանալի բաշխվածության հետևանքով երեխաների նկատմամբ բռնությունների հանդեպ

արձագանքն անարդյունավետ է: Չնայած ընտանեկան բռնության մասին 2017թ. ընդունված օրենքին՝ դեռևս չկան իրավական ու նորմատիվային ակտերը, որոնք անհրաժեշտ են օրենքի իրականացման համար:

Ըստ դիտորդների՝ սեռական բնույթի հանցագործությունների երկու երրորդը կատարվել են անչափահասների հանդեպ: Ըստ պաշտոնական վիճակագրության տարվա առաջին վեց ամիսների ընթացքում Քննչական կոմիտեի վարույթում քննվել է երեխաների դեմ ուղղված հանցանքների 206 դեպք, որից մեկ քառորդի պարագայում առկա էին սեռական բռնության հատկանիշներ: Ըստ դիտորդների՝ սեռական բռնության մասով իրական պատկերն ավելի վատն է, քանի որ ամոթալի համարվելու պատճառով բռնության նման դեպքերի մասին տուժողներն ու նրանց հարազատները հաղորդումներ չեն ներկայացնում:

Երեխաների, վաղ և պարտադրված ամուսնություն. Օրենքով սահմանված ամուսնական նվազագույն տարիքը 18-ն է: Աղջիկների շրջանում վաղ ամուսնությունները լայնորեն տարածված են եզդիական համայնքներում և դրա հետևանքով աղջիկները դուրս են գալիս դպրոցից: Կառավարությունը խնդրի ծավալն արձանագրելուն կամ այդ պրակտիկան վերացնելուն ուղղված քայլեր չի ձեռնարկել:

Երեխաների սեռական շահագործում. Օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և սահմանում է 7-15 տարվա ազատազրկում այդ խախտումների համար դատապարտվելու դեպքում: Մանկական պոռնոկազրության համար դատապարտվելիս նախատեսվում է մինչև յոթ տարվա ազատազրկում: Սեռական համաձայնության նվազագույն տարիք է համարվում 16 տարին: Հունիսի 18-ին կառավարության կողմից սահմանվեց մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման զոհ դարձած երեխաների ուղղորդման մեխանիզմ:

Թեպետ պաշտոնական վիճակագրությամբ հիշատակվում են երեխաների շահագործման ու վաճառքի սակավաթիվ դեպքեր, սակայն ըստ ՀԿ-ների կան բազմաթիվ չբացահայտված և չհաղորդված դեպքեր, ինչը պայմանավորված է օրենսդրության, ուսուցման, իրազեկման բարձրացման, բացահայտման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված բացերով:

Հաստատություններում գտնվող երեխաներ. Շարունակվում էր կյանքի դժվարին հանգամանքներում հայտնված և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների փակումն ու վերակազմավորումը, իսկ կառավարությունը ռեսուրսներ էր հատկացնում ընտանեկան աջակցություն ու կանխարգելիչ ծառայություններ ապահովելու համար: Կառավարությունը միջազգային կազմակերպությունների և այլ գործընկերների օժանդակությամբ

նվազեցրեց շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թիվը՝ հունվարի դրությամբ հաստատություններում գտնվող երեխաների թիվը կազմում էր 1.300 երեխա, մինչդեռ 2018թ. այդ թիվը 2.400 էր: Երեխաների գերակշիռ մասը վերադարձվեցին կենսաբանական ընտանիքներին կամ մոտ ազգականներին, իսկ փոքրաթիվ երեխաների համար էլ ապահովվեց այլընտրանքային ընտանիք կամ համայնքահենք տարբերակ:

Չնայած հաստատություններում գտնվող երեխաների թվի կրճատմանը՝ բարձր թիվ էին կազմում ստացիոնար խնամքի ու կրթական հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաները, և նրանց համար դեռևս սակավ հասանելի էին խնամքի ընտանեկան կամ համայնքահենք տարբերակները: Կառավարության համար շարունակում էր գերակա մնալ հաստատություններից դուրս հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծառայությունների ապահովումը և երեխաների ու ընտանիքների համար հասանելիության ու հավելյալ պայմանների ապահովումը:

Կառավարությունը շարունակում էր աջակցել խնամատար ծառայությունների զարգացմանը: 2018թ. քառակի ավելացվեց խնամատար ընտանիքի պետական ֆինանսավորումը և մասամբ դրանով էր պայմանավորված խնամատար ընտանիքների թվի շարունակաբար ավելացումը, որը 2018թ. 45-ից դարձել էր 75 ընտանիք (օգոստոսի դրությամբ):

Տարվա ընթացքում կառավարությունը ջանքեր գործադրեց արտակարգ իրավիճակներում խնամատար ընտանիքներում խնամք ապահովելու համակարգի խթանման ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի հոգալ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարիքներն արտակարգ իրավիճակներում, այդ թվում՝ նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակներում: Կառավարությունը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի օգնությամբ միջոցներ էր ձեռնարկում հաշմանդամությամբ պայմանավորված երեխաներին լքելու դեպքերը կանխելու ուղղությամբ:

2019թ. դեկտեմբերին ՄԻՊ-ն արտահերթ զեկույց հրապարակեց հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխաների և անգործունակ չափահասների իրենց կարծիքը հայտնելու իրավունքի մասին: Զեկույցում նշվում էր, որ նրանց օրինական ներկայացուցչի համաձայնությունն իրավականորեն բավարար հիմք էր երեխաներին և անգործունակ չափահասներին հոգեբուժարանում տեղավորելու համար: Արդյունքում՝ խախտվում էին այդ անձանց իրենց կարծիքը հայտնելու ու իրազեկ համաձայնություն տալու իրավունքները: Իրավական բացերով պայմանավորված հաճախ դեպքեր են եղել, որ մարդիկ «կամավոր հիմունքներով» պաշտոնապես

պահվել են հոգեբուժական հիվանդանոցներում իրենց օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բայց իրականում դա եղել է հարկադիր մեկուսացում: Իրավական կարգավորումները թույլ չեն տվել, որ նրանց բուժման համար դատական որոշում լինի: ՄԻՊ-ի դիմումից հետո փետրվարին Սահմանադրական դատարանը հոգեբուժական հաստատություններում տեղավորելու վերաբերյալ երեխաների ու անգործունակ անձանց կարծիքը հաշվի չառնելը որակեց որպես հակասահմանադրական:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տես Օնոդների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը՝ <https://travel.state.gov/content/travel/en/International-Parental-Child-Abduction/for-providers/legal-reports-and-data/reported-cases.html>:

2019թ. նոյեմբերին Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդում տարածեց, որ բացահայտել է կազմակերպված հանցավորության մի շղթա, որն զբաղվել է անօրինական որդեգրումներով, ինչ արդյունքում ավելի քան 30 երեխա է վաճառվել օտարերկրացիներին: Ըստ մամուլի հաղորդագրության կասկածյալները դիմել են շանտաժի, հարկադրանքի և խաբեության, որպեսզի սոցիալապես անապահով վիճակում գտնվող հղիները երեխան մինչև վերջ կրեն ու հրաժարվեն նորածնից: Որոշ դեպքերում մայրերին ասել են, որ երեխան ծնվել է լուրջ առողջական խնդիրներով կամ մահացած: Խումբը երեխաներին նախ տեղավորել է մանկատներում, ապա կեղծելով փաստաթղթերը, հնարավոր է դարձրել օտարերկրյա որդեգրումը (տեղի օրենսդրությամբ նախապատվությունը տրվում է որդեգրմանը երկրի ներսում): Տարվա վերջի դրությամբ քննությունն ընթացքի մեջ էր:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Նախքան աշնանն ադրբեջանի հետ ռազմական գործողությունները հակասեմական դրսևորումների մասին հաղորդումներ չէին եղել, չնայած կային որոշ հակասեմական մեկնաբանություններ սոցիալական հարթակներում՝ ուղղված կառավարության ներկայացուցիչներին ու ակտիվիստներին: Կառավարությունը չի դատապարտել այս հակասեմական մեկնաբանությունները:

Ըստ հրեական համայնքի և այլ դիտորդների՝ աշնանն ադրբեջանի հետ ռազմական գործողությունները հանգեցրին հակասեմական տրամադրությունների ավելացման և այս միտումը մեծապես վերագրվում էր Ադրբեջանի կողմից Իսրայելում արտադրված զենքերի օգտագործմանը: Ըստ հրեական համայնքի և այլ դիտորդների՝ ավելացել էին

հակասեմական բնույթի գրառումները: Հրեական համայնքի անդամները նշում էին, որ հանրային տրանսպորտում ևս իրենց ուղղվել են հակասեմական բնույթի մեկնաբանություններ: Հոկտեմբերի 14-ին ներկով էր ծածկվել, իսկ հոկտեմբերի 22-ին այրվել էր հայ և հրեա ժողովուրդների երկու ողբերգությունների զոհերին նվիրված հուշարձանը Երևանում (տես նաև՝ ԱՄՆ պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին զեկույցը):

Մարդկանց թրաֆիքինգ

Տես Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին զեկույցը <https://www.state.gov/trafficking-in-persons-report/> էջում:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել հասանելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են ֆիզիկապես ոչ հասանելի: Այս անհասանելիության հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք նաև չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը, քանի որ ընտրությունների ժամանակ այս շենքերը հաճախ ծառայում են որպես ընտրական տեղամասեր:

Մի գործընթացի շրջանակում, որտեղ ընդգրկված էին տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև համապատասխան ՀԿ-ները, կառավարությունը մշակեց անձի հաշմանդամության կարգի գնահատման նոր մոդել, որը հիմնվում է նրանց կարիքների համակողմանի գնահատման և ոչ սոսկ բժշկական ու սոցիալական գնահատման վրա:

Տարվա ընթացքում կառավարությունն ընդլայնեց պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ցուցաբերվող աջակցությունը, որն ապահովվում էր ցերեկային խնամքի կենտրոնների կողմից: Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի կողմից սա համարվեց կարևոր քայլ

հաստատությունների բեռնաթափման և հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն կենսակերպը խթանելու ճանապարհին: Տարվա ընթացքում անցկացված բաց մրցույթով կառավարությունը դրամաշնորհային պայմանագրեր կնքեց 12 ՀԿ-ների հետ (2019թ. 3 ՀԿ-ի փոխարեն), որոնք աշխարհագրական ավելի լայն ընդգրկմամբ ապահովելու էին խնամքի ու սոցիալական ինտեգրման ամենամյա ծառայություններ հաշմանդամություն ունեցող 460 անձի համար (2019թ.՝ 190 հոգու): Ըստ կոալիցիայի տարվա ընթացքում հաշմանդամության հարցերով զբաղվող ավելի շատ ՀԿ-ներ են ներառվել տարբեր հանրային խորհուրդների կազմում, այդ թվում՝ համայնքապետարանների ու նախարարությունների ներքո, ինչը հանրային որոշումների կայացման գործընթացներում ՀԿ-ների մասնակցության ավելի շատ հնարավորություններ է ընձեռում:

Չնայած հանրակրթության մասին օրենքը սահմանում է, որ մինչև 2025թ. հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընդհանուր կրթությունից անցում է կատարվելու դեպի ներառական կրթություն և չնայած ներառական կրթության միտումների մեծացմանը՝ գործող պրակտիկան շարունակում էր մնալ մասնատված և խտրական և չէր հանգեցնում կրթական համակարգի ու սոցիալական նորմերի լայնամասշտաբ և կայուն փոփոխությունների: Շատ ՀԿ-ներ շարունակում էին հայտնել, որ դպրոցներում ապահովված չէ ֆիզիկական հասանելիությունը, ուսումնական նյութերի հասանելիությունը և քիչ ջանքեր են գործադրվում ներառական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ողջամիտ հարմարություններ ապահովելու ուղղությամբ:

Նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված հեռավար ուսուցումը խոչընդոտեց հատուկ հարմարությունների կամ կրթական աջակցության կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող երեխաներին (հատկապես տեսողական, լսողական ու մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ) որակյալ կրթություն ապահովելուն ուղղված աշխատանքներին: Մարտից մինչև ուսումնական տարվա ավարտ շատ երեխաներ չկարողացան մասնակցել դասերին՝ տեխնիկական միջոցների կամ համակարգչային գիտելիքների բացակայության, ինչպես նաև վարքագծային ու այլ խնդիրների հետևանքով: Ուսուցիչները չունեին դասավանդման այլընտրանքային մեթոդների կիրառման բավարար պատրաստվածություն և արդյունքում հաշմանդամություն ունեցող երեխաները մեծապես դուրս էին մնում կրթական գործընթացից կամ չէին ստանում համարժեք կրթություն: Առերես դասերը վերսկսվեցին աշնանը:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձիք խտրականության են բախվել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնման, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով:

Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, հաստատություններում խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները:

Ազգային/ռասայական/էթնիկ փոքրամասնական խմբերի անդամներ

1991թ. Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների փակումից հետո բորբոքիչ հոկտոբրաբանությունն ու ատելության խոսքը տարածում էին ստացել, հատկապես հաշվի առնելով այն, որ մի ամբողջ սերունդ հասակ էր առնում առանց մյուս կողմի հետ փոխադարձ շփումների: Սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը տեղի ունեցած թեժ ռազմական գործողությունների ժամանակ, ըստ հաղորդումների, բոլոր կողմերը թույլ են տվել վայրագություններ (տես բաժին 1.ա և 1.գ):

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, քրեականացում և այլ չարաշահումներ

Հակախտրական օրենսդրական դրույթները՝ ԼԳԲՏԻ անձանց համար պաշտպանություն չէին ապահովում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերով: Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարի մասին օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏԻ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ զբաղվածություն, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների հասանելիություն: Հակա-ԼԳԲՏԻ

տրամադրությունները և կոչերը սրվում էին քաղաքական ակտիվության շրջաններում: Բազմաթիվ քաղաքական և հասարակական գործիչներ, հատկապես նախորդ իշխանության աջակիցները, օգտագործում էին հակա-ԼԳԲՏԻ հռետորաբանությունը՝ հաճախ ԼԳԲՏԻ անձանց ներկայացնելով որպես «ազգային անվտանգության սպառնալիք»: Տրանսգենդեր անձինք հատկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամը սրեց այն իրավական, սոցիալական ու տնտեսական անհավասարությունները, որոնց բախվում էին ԼԳԲՏԻ անձինք: Այս անձանց գերակշիռ մասն աշխատում էր ծառայությունների ոլորտում կամ գոյատևում էին փողոցում կատարվող աշխատանքի կամ բարեգործության միջոցով և արտակարգ դրության ժամանակահատվածում զրկված էին ապրուստի իրենց միջոցներից: Սա անդրադարձել էր ուսելիքի, կացության ու այլ առաջին անհրաժեշտության կարիքների վրա: Որոշ ԼԳԲՏԻ անձինք, որոնք նախկինում հեռացել էին ոտնահարումներ թույլ տվող ընտանիքներից, անօթևանության խնդրին էին բախվում, իսկ մյուսները սահմանափակումների շրջանում տանն էին փակված իրենց չընդունող ընտանիքի անդամների հետ: Մինչ բուժօժանություններ ապահովողների խտրական վերաբերմունքը խստորեն սահմանափակում էր բուժօժանությունների հասանելիությունը ԼԳԲՏԻ անձանց համար, նրանցից շատերը նաև պարզեցին, որ իրավասու չեն օգտվել նոր կորոնավիրուսի համավարակի շրջանում բնակչության խոցելի խմբերին աջակցելու նպատակով կառավարության կողմից իրականացվող որևէ ծրագրից:

Տարվա ընթացքում ՓԻՆԲ ՀԿ-ն արձանագրել է սեռական կողմնորոշման և գենդերային բռնության հիմքով ուղղակի ու միջնորդավորված խտրականության 41 դեպք, մինչդեռ 2019թ. ընթացքում գրանցվել էր այդպիսի 37 դեպք: Դրանք ներառում էին ասելության հիմքով իրականացված այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, պարբերական հոգեբանական բռնությունը, գույքի նկատմամբ ոտնձգությունը, ինչպես նաև անձի կյանքին ու առողջության ուղղված սպառնալիքները: Շատ դեպքերում տուժողները չեն դիմել իրավապահների օգնության կամ դատարաններ՝ համարելով, որ այդ քայլերն անարդյունավետ են, քանզի իրավապահները հավանաբար չեն արձագանքի:

«Նոր սերունդ» ՀԿ-ի հաղորդմամբ տարվա ընթացքում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ենթադրյալ ոտնահարման 130 դեպք է գրանցվել: Դեպքերը տեղի են ունեցել ընտանիքներում (37 տոկոս), գորակոչի կամ զինվորական ծառայության ընթացքում (20 տոկոս), սպասարկման ոլորտում աշխատանքային հարաբերությունների

համատեքստում (20 տոկոս), իրավապահների կողմից (12 տոկոս) և առողջապահական ծառայությունների ժամանակ (11 տոկոս):

2018թ. «Իրավունքի կողմ» ՀԿ-ը կատարեց առաջին հետազոտությունը տրանսգենդեր անձանց դեմ ուղղված ատելության հանցանքների վերաբերյալ՝ բացահայտելով ատելությամբ պայմանավորված բռնության դեպքերը 2016-17թթ. 12-ամսյա ժամանակահատվածի համար: Միջադեպերի գերակշիռ մասը տեղի է ունեցել հանրային վայրերում, հիմնականում՝ գիշերվա ժամերին: Տուժողները նշում էին, որ իրենք ավելի հակված էին օգնության համար դիմել ընկերներին կամ ԼԳԲՏԻ հարցերով զբաղվող ՀԿ-ներին, քան տուժողների օգնության խմբերին կամ բժիշկներին: Հարցվածներից միայն մի քանիսն են մատնանշել, որ ոստիկանությունը պատրաստակամորեն աջակցել է: Ըստ մարդու իրավունքների խմբերի՝ տրանսգենդեր կանայք բժշկական խորհրդատվության ու օգնության հասանելիության հետ կապված բախվել են բազմաթիվ խոչընդոտների՝ պայմանավորված բժիշկների շրջանում իրազեկության բացակայությունից մինչև բացահայտ խտրականություն: Սեռափոխությունը երկրում որպես բժշկական ծառայություն չի կարգավորվում: Արդյունքում՝ տրանսգենդեր անձինք սեռափոխության վիրահատություններն անցնում են գաղտնի՝ արտասահմանից հրավիրված բժիշկների օգնությամբ և հետագայում նրանց համար հասանելի չեն լինում համապատասխան բուժօժանություններն ու վերականգնողական խնամքը:

Տարվա ընթացքում եղել են ԼԳԲՏԻ անձանց հանդեպ ընտանեկան բռնության դեպքերի մասին հաղորդումներ: Օրինակներից մեկը լեսբուհի Գ.Լ.-ն է, որը հուլիսի օգնության համար դիմել էր «Նոր սերունդ» ՀԿ-ին: Այն բանից հետո, երբ ընտանիքը մեկ տարի առաջ իմացել էր նրա կողմնորոշման մասին, հայրը նրան ծեծել էր ու տնից դուրս չէր թողել: Ի վերջո, նա կարողացել էր փախուստի դիմել ու գնալ մորաքրոջ տուն, սակայն հոր սպառնալիքները շարունակվում էին: Նա դիմել էր ոստիկանություն, և ոստիկանությունը հորից պահանջել էր չանհանգստացնել նրան: Հայրը շարունակել էր սպառնալ աղջկան ու նա փախել եկել էր Երևան: Մեկ այլ օրինակում էլ տրանսգենդեր մի կին՝ Գ.Կ.-ը հայտնել էր, որ ընտանիքում իր հանդեպ ընտանեկան բռնություն է դրսևորվել իր գենդերային ինքնության պատճառով: Նա ի վերջո հեռացել էր տնից, մնացել էր փողոցում՝ մինչև կարողանար բնակարան վարձել. սակայն տանտերը նրան դուրս էր հանել տնից՝ իմանալով որ նա տրանսգենդեր է:

Առաջընթաց չկար 2018թ. ԼԳԲՏԻ ակտիվիստների վրա հարձակում գործած շուռնուխցիներին պատասխանատվության ենթարկելու հարցում: Օգոստոսի 4-ին վերաքննիչ քրեական դատարանը վճռեց, որ քննիչները չեն ապահովել պատշաճ

քննություն և հաշվի չեն առել տուժողների հոգեբանական տառապանքները և արարքի խտրական բնույթը. դատարանը պահանջեց գործի վերաբացում: Մակայն սեպտեմբերի սկզբին դատախազը դեռևս չէր վերաբացել գործը, իսկ քննիչները չէին կարողացել կատարել բոլոր տուժածների հոգեբանական գնահատում (ինը տուժածներից հինգը հեռացել էին երկրից):

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից: Ազատումը սակայն հիմնավորվում է հոգեկայունության և հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ ծառայակիցների և հրամանատարության կողմից: Մի օրինակում, երբ ծառայակից զինվորները բացահայտել էին գեյ երիտասարդի սեռական կողմնորոշումը, նրա հանդեպ ոտնձգություններ էին սկսել: Մարտի 31-ին նա օգնության համար դիմել էր «Նոր սերունդ» ՀԿ-ին, որն էլ դիմել էր Պաշտպանության նախարարությանը նրան ծառայությունից ազատելու առաջարկով: Նրա գործը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

2019թ. մարտին Epress.am-ում ներկայացվեց Ա.Ա.-ի պատմությունը սեռական կողմնորոշման հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու մասին: Պահանջվել էր պարտադիր բժշկական ստուգում հոգեբուժական հիվանդանոցում, որտեղ չէր պահպանվել անձնական տեղեկությունների գաղտնիությունը, իսկ գիսավոր փորձաքննության ժամանակ տեղ էր գտել նաև ֆիզիկական բռնություն, և հանձնաժողովի նախագահ Հենրիկ Մուրադյանը վիրավորական խոսքեր էր ասել ու հարվածել Ա.Ա.-ի դեմքին՝ 15-հոգանոց հանձնաժողովի անդամների վիրավորանքների ներքո: Ա.Ա.-ի պաշտոնական ախտորոշումը հոգեկան հիվանդությունն էր: Դիտորդները նկատում էին, որ այս դեպքերում որպես զինվորական ծառայությունից ազատվելու հիմք նշվող ախտորոշման հոգեկան ըստ էության հոգեկան հիվանդությունների են վերաբերում, օրինակ՝ շիզոֆրենիա կամ գլխուղեղի օրգանական ախտահարում, որոնք զինվորական ծառայությունից ազատվելուց զատ նախատեսում են նաև մի շարք այլ իրավական սահմանափակումներ:

ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը սոցիալական խարան համարելը

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից: Այսօրինակ խտրականությունն առավելապես նկատվում է, երբ ՄԻԱՎ-դրական անձինք փորձում են բուժօգնություն ստանալ:

Ապրիլի 29-ին «Նոր սերունդ» ՀԿ-ը հաղորդում ներկայացրեց, որ մարտի 16-ին «Իզմիրյան» բժշկական կենտրոնում հրաժարվել են վիրահատել ՄԻԱՎ-դրական մի անձի: Թեպետ բժշկի որակմամբ դեպքն անհետաձգելի էր, սակայն նա հրաժարվեց հիվանդանոցում տեղավորել պացիենտին: Ինչպես բացատրել էին պացիենտին, հիվանդանոցի ղեկավարությունը պահանջում է ՄԻԱՎ-դրական պացիենտներին մեկուսացնել, իսկ այդ պահին ազատ մահճակալ չլինելու պատճառով իրենք չեն կարող ապահովել անհրաժեշտ բուժօգնությունը: Այդ անհատն ավելի ուշ բուժում ստացավ մեկ այլ հիվանդանոցում: Արձագանքելով ՀԿ-ի ուղարկած այս հաղորդմանը՝ Առողջապահական ու աշխատանքի տեսչական մարմինը ստուգում անցկացրեց «Իզմիրյան» բժշկական կենտրոնում, գրանցեց խախտումները և հրահանգեց 30-օրյա ժամկետում ներդնել ընթացակարգեր, որոնք կապահովեն օրենքի պահանջների կատարումը: 2018թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքի հարցերով զեկուցողի հունիսին ներկայացրած զեկույցի համաձայն՝ այդ վիճակը խարան համարելն ու խտրականությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց համար բուժման ու բուժճառայություններ ստանալու խոշորագույն խոչընդոտն են առողջապահական միջավայրում: Ըստ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով կանայք կրկնակի խտրականության են բախվում և նրանց համար ընտանիքում ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվելու ավելի մեծ ռիսկ կա:

Ըստ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված դժվարացել է բժշկական ծառայությունների հասանելիությունը ՄԻԱՎ-դրական անձանց համար, քանի որ նրանց սպասարկող բազմապրոֆիլ հիվանդանոցներից շատերը վերապրոֆիլավորվել և սպասարկում են միայն նոր կորոնավիրուսով պացիենտներին: Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության սկզբնական ամիսներին կիրառված տեղաշարժի սահմանափակման հետևանքով անհնար էր դարձել նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող հղի կանանց բժշկական սպասարկումը, քանի որ երկրում կա միայն մեկ

հիվանդանոց (Երևանում), որտեղ նախաձեռնողյան ու ծննդաբերական ծառայություններ են մատուցվում այդ կանանց:

Խտրական գործողությունների խթանում

Որոշ խմբեր և անհատներ, ինչպես նաև առցանց ու հեռարձակող լրատվամիջոցներ, որոնք գերազանցապես կապված են նախորդ ռեժիմին, խթանում էին խտրականության դրսևորումները՝ թիրախավորելով պետական պաշտոնյաներին, ԼԳԲՏԻ անձանց, կրոնական փոքրամասնությունների անդամներին, քաղաքացիական հասարակության առանձին գործիչներին, հիմնադրամներին և իրավապաշտպաններին: Այս խմբերի մի մասը նպատակ ուներ ընդհանուր առմամբ արժեզրկել մարդու իրավունքների ուղղությամբ տարվող աշխատանքը և ժողովրդավարական արժեքներն ու մասնավորապես լռեցնել իրավապաշտպանների ձայները: Քաղաքացիական հասարակության ակտիվիստները նկատում էին, որ հակաժողովրդավարական ակտիվիստները մեկ առ մեկ թիրախավորում էին անհատներին՝ հեղեղելով աստեղության խոսքով ու տեղադրելով լուսանկարներ առցանց տիրույթում՝ ցույց տալու, որ անձը մշտական դիտարկման ներքո է: Մրա հետևանքով որոշ անհատներ դադարեցրել են իրենց ներկայությունն առցանց տիրույթում: Կառավարությունն արդյունավետ միջոցներ չի ձեռնարկել հակազդելու այդօրինակ արշավներին և երբեմն էլ տուրք է տվել խոսակցություններին, որ առաջ էին տանում աստեղության խմբերը:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ոչ քաղաքացիական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի, ինչպես նաև աշխատողների 2/3-ի համաձայնությունը՝ արտահայտված գաղտնի քվեարկության միջոցով: Օրենքը

նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Տարվա ընթացքում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (ԱԱՏՄ) սկսեց իրագործել պլանային ստուգումներ անցկացնելու իր լիազորությունը կառույցի իրավասությունների շրջանակում ներառված չորս ուղղություններով՝ սանիտարահամաճարակային անվտանգություն, բժշկական օգնություն և ծառայություններ, դեղերի շրջանառություն, ինչպես նաև աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովում և աշխատանքային օրենսգրքով սահմանված անչափահասների աշխատանքային իրավունքների պաշտպանություն: ԱԱՏՄ-ի կողմից իրականացվել է 27 տեսչական ստուգում հանքարդյունաբերության ոլորտում: Խախտումների համար նախատեսված տույժերը համարժեք են եղել քաղաքացիական իրավունքների մերժման մյուս դեպքերով նախատեսված տույժերին: 2019թ. դեկտեմբերին Ազգային ժողովը փոփոխություն կատարեց աշխատանքային օրենսգրքում, որով վերականգնվեց ԱԱՏՄ-ի պետական վերահսկողության գործառույթն աշխատանքային օրենսդրության ողջ ծավալով, ինչը գործողության մեջ կմտնի 2021թ. հուլիսից:

Հուլիսին կառավարությունը հավանություն տվեց, որ վարձվեն ևս 80 տեսուչ, որոնք կսկսեն աշխատել 2021թ. ապրիլից: Ըստ պլանի՝ 2021թ. հուլիսից կառույցի ընդհանուր 340-հոգանոց աշխատակազմից 84 տեսուչ զբաղվելու են աշխատանքային օրենսդրության հետ կապված ստուգումներով:

Ի պատասխան նոր կորոնավիրուսի համավարակին՝ ապրիլի 29-ին Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց աշխատանքային օրենսգրքում՝ թույլ տալով ԱԱՏՄ-ին լիարժեք վերահսկողություն իրականացնել աշխատանքային օրենսգրքի հարցերի շուրջ բնական ու տեխնածին աղետների, համաճարակների, հրդեհների, միջադեպերի ու արտակարգ իրավիճակների կանխման ընթացքում: Փոփոխություններով նաև սահմանվում են աշխատողների իրավունքների այլ պաշտպանություններ, մասնավորապես տնից աշխատելու և դրա հետ կապված վարձատրության վերաբերյալ: Այս փոփոխությունները, ինչպես նաև ԱԱՏՄ-ի կանոնադրության փոփոխությունները հնարավորություն տվեցին ԱԱՏՄ-ին հուլիսի 3-ից քայլեր ձեռնարկել աշխատանքային օրենսդրության խախտումների ուղղությամբ՝ հիմք ընդունելով գրավոր բողոքները:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ժամանակահատվածում ԱՄՏՄ-ին և մյուս պետական տեսչական մարմիններին հանձնարարվել էր առօրյա կտրվածքով ստուգումներ ապահովել՝ վարակի տարածումը կանխելուն ուղղված պահանջների ապահովումը երաշխավորելու նպատակով: Այս բոլոր ստուգումները միտված էին աշխատողների առողջության ու անվտանգության միջոցների ապահովմանը՝ ըստ պարետի ցուցումների. նոր կորոնավիրուսով պայմանավորված ստուգայցերի ժամանակ տեսուչները միջոցներ են ձեռնարկել աշխատանքային օրենսդրության խախտումների վերաբերյալ, եթե այդպիսիք եղել են:

Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ. այնուհանդերձ, ԱՄՏՄ-ը քայլեր է ձեռնարկել արհմիություններն ամրապնդելու ուղղությամբ՝ խթանելով կառույցի ներսում ամուր արհմիության ձևավորմանը: Փորձագետները նշում էին, որ թեպետ Սահմանադրությամբ ամրագրված է գործադուլների իրավունքը, սակայն այն դժվար է իրացնել, քանի որ առկա են հաշտեցման ու քվեարկելու պահանջներ:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են և քրեորեն պատժելի են համարվում հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, սակայն օրենքում «հարկադիր աշխատանքի» սահմանում չի տրվում: Կառավարությունն արդյունավետ կերպով չի ապահովել օրենքի կիրառումը: Քրեական հետապնդումներում նախաձեռնողականություն հանդես չի բերվել և մեծ է եղել զոհերի ինքնաբացահայտմանն ապավինելու աշխատառճը. աշխատանքային թրաֆիքինգի գործերով վերջին անգամ դատապարտում եղել է 2014թ.: Չկային համարժեք ռեսուրսներ, ստուգումներ ու լուծումներ, որպեսզի բացահայտվեր հարկադիր աշխատանքի դեպքերի ողջ շրջանակը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի ոլորտում տեսչական ստուգումների արդյունավետ մեխանիզմի բացակայությամբ: Աշխատանքային թրաֆիքինգի համար նախատեսված տույժերը համարժեք են այլ լուրջ հանցանքների համար նախատեսվող պատիժներին, սակայն հազվադեպ են կիրառվել:

Տես նաև Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության զեկույցը՝ <https://www.state.gov/trafficking-in-persons-report/>:

զ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Օրենքն արգելում է երեխայի վատթարագույն աշխատանքի բոլոր ձևերը: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքների արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Նախատեսված տույժերը համարժեք են այլ լուրջ հանցանքների համար նախատեսվող տույժերին, բայց բավարար չէին համապատասխանության պահանջների կատարումը պարտադրելու համար: Ոչ պլանային կամ անսպասելի տեսչական այցերի բացակայությունը խոչընդոտել է երեխայի աշխատանքի վերաբերյալ օրենսդրական պահանջների կիրառմանը: Տարվա ընթացքում ԱՄՄ-ն ուսումնասիրել է երեխայի աշխատանքի մի քանի դեպք և մի անգամ տուգանել է գործատուին, որի փոում աշխատում էր 14 տարին չլրացած անչափահաս:

14 տարին չլրացած երեխաները զբաղված են եղել տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսություն, շինարարություն և մուրացկանություն: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաներն առավել խոցելի էին գյուղատնտեսության ոլորտում հարկադիր աշխատանքի տեսանկյունից: Բացի այդ, կառավարության կողմից միջոցներ են ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը շուրջօրյա խնամքի հաստատություններում նվազեցնելու ուղղությամբ, որտեղ նրանք առավել խոցելի էին երեխայի աշխատանքի առումով:

Տես նաև ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները՝ <https://www.dol.gov/agencies/ilab/resources/reports/child-labor/findings> էջում:

դ) Աշխատանքային և մասնագիտական խտրականություն

Սահմանադրությամբ ու աշխատանքային օրենսգրքով արգելվում է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ

սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել համապատասխան օրենքների կիրառումը և չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու համապատասխան կանոնակարգերի կիրառումը: Աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումները պայմանավորված են սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ, թեև վիճակագրություն այսօրինակ խտրականության ծավալների վերաբերյալ չի եղել: Խախտումների համար սահմանված վարչական տույժերը քաղաքացիական իրավունքի մերժման հետ կապված այլ նմանատիպ օրենքներով սահմանված տույժերին համահունչ չեն եղել:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: Արժույթի միջազգային հիմնադրամը նշում էր, որ աշխատավարձերի գենդերային տարբերությունը երկրում շեշտակի մեծ էր: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ կանանց աշխատավարձի ու տղամարդկանց աշխատավարձի տարբերությունն ավելի քան 30 տոկոս է: Ըստ Ասիական զարգացման բանկի 2019թ. գեկույցի տղամարդկանց համեմատ կանանց մասնակցությունն աշխատուժում ավելի քիչ է, և կանայք առավել հաճախ են զբաղեցնում ոչ լրիվ դրույքով հաստիքներ: Ձեկույցը նաև նշում էր, որ մասնագիտությունների շուրջ ձևավորված կարծրատիպերը սահմանափակում էին կանանց ընտրության շրջանակը, և կանանց ավելի քան 60 տոկոսը ներգրավված է ուղղակի երեք ոլորտում՝ գյուղատնտեսություն, կրթություն և առողջապահություն: Կանայք նաև քիչ թիվ են կազմում ղեկավար պաշտոններում, և փոքր ու միջին ձեռնարկություններում կին ղեկավարներ հանդիպում են 5-ից մեկում:

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի և սեռի՝ հաճախակի թափուր տեղերի համար առաջադրելով պահանջներ սեռի, տարիքի ու արտաքին տվյալների վերաբերյալ: Չնայած որ խտրականության այս

դրսևորումը բավական լայն տարածում ուներ, սակայն չկային հուսալի հետազոտություններ և իշխանությունները ոչ մի գործողություն չէին ձեռնարկում խնդիրը մեղմելու համար: Աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը և դրա մասշտաբները մատնացույց անող համակողմանի հաղորդումներ չկային, սակայն լրատվական հրապարակումները փաստում էին, որ այդ ոտնձգությունները սովորական երևույթ էին: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարետես կանայք: Գործազուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳՏԻ անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք և հղի կանայք զբաղվածության հարցերում նույնպես հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ըստ հաղորդումների խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձն աղքատության շեմից բարձր է: Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր վճարովի արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ:

Համապատասխան մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ո՛չ օրինական, ո՛չ սովերային ոլորտներում, իսկ աշխատավարձի, աշխատաժամերի, աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման խախտումների համար տույժերը համահունչ չեն եղել նմանօրինակ այլ արարքների համար սահմանված տույժերին: Ըստ իրավաբանների՝ աշխատողների իրավունքները շարունակել են մնալ չպաշտպանված՝ պայմանավորված աշխատանքային տեսչական ստուգումների կայուն մարմնի և անկախ արհմիությունների բացակայությամբ: Այնուհանդերձ, ըստ ԱՍՏՄ-ի այն փաստը, որ հուլիսից ստացված բազմաթիվ աշխատանքային բողոքներ լուծում են ստացել գործատուների կողմից՝ առանց ԱՍՏՄ-ի որոշմանը սպասելու, փաստում են այստեղ դրական տեղաշարժերի մասին, և մատնանշում, որ ԱՍՏՄ-ի

գոյությունն արդեն իսկ կանխարգելիչ նշանակություն ունի խախտումների մասով: Աշխատանքային հարցերին առնչվող գործերով վարչական դատարանները պարտավոր են որոշումները կայացնել եռամսյա ժամկետում, սակայն իրենց իրավունքների վերականգնման համար սակավաթիվ աշխատողներ են ընտրում դատական ճանապարհը՝ պայմանավորված իրավական ծախսերով, հայց ներկայացնելու գործընթացի խրթինությամբ և դատական համակարգի նկատմամբ անվստահությամբ: Պարզ չէր արդյոք գերծանրաբեռնված դատարանները կկարողանային ապահովել վեճի լուծման եռամսյա ժամկետը, եթե այդպիսի հայցեր ներկայացվեին:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողներին ընդունել են 10-30 օր չձևակերպված ոչ վճարովի «փորձաշրջանով»: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Ըստ 2018թ. տեղական «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ-ի անցկացրած հետազոտության համաձայն փոքր բիզնեսում զբաղվածներից պայմանագրեր ունեին միայն 48 տոկոսը: Հետազոտությունը նաև բացահայտեց վճարովի ամենամյա արձակուրդի օգտագործման ու արտաժամյա աշխատանքի վարձատրության հետ կապված խնդիրներ:

Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները, հաճախ օգտվելով այլ աշխատանք չլինելու հանգամանքից, չեն ապահովել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմաններ և քայլեր չեն ձեռնարկել բնապահպանական մտահոգությունների հետ կապված: Համաշխարհային բանկի 2019թ. մի զեկույցում նշվում էր, որ երկրի աշխատավարձային վարձատրությամբ աշխատողների մոտ 13 տոկոսը չունեին զբավոր պայմանագրեր և չէին օգտվում այնպիսի արտոնություններից, ինչպիսիք են՝ վճարովի արձակուրդը, երեխայի խնամքի և անաշխատունակության արձակուրդը: Երկրի տնտեսության գյուղատնտեսական ուղղվածությամբ պայմանավորված ստվերային զբաղվածության միտումներ կային: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ կառավարության հակակոռուպցիոն քայլերն ու հարկային մարմինների ակտիվ ջանքերը հանգեցրել են պաշտոնապես գրանցված աշխատողների թվի նկատելի ավելացման երկրում: Նոր կորոնավիրուսի

համավարակով պայմանավորված ստվերային զբաղվածության հարցը հայտնվեց ուշադրության կենտրոնում: Կառավարության կողմից նպաստներ հատկացվեցին այն գրանցված աշխատողներին, որոնք համավարակի պատճառով կորցրել էին իրենց աշխատանքը. չգրանցված աշխատողներին ու ինքնազբաղ անձանց հատկացվող նպաստն անհամեմատ ավելի քիչ էր: Կառավարությունն ընդունում էր, որ ստվերային աշխատողների ու ինքնազբաղ անձանց նույնականացման հետ կապված խնդիրն առկա է, քանի որ երկրում չկա եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ և, ի վերջո, որոշեց աջակցությունն ուղղել ընտանիքներին՝ մի շարք ցուցիչների դիտարկմամբ, օրինակ՝ անչափահաս երեխայի առկայություն, կամ երբ երեխայի երկու ծնողն էլ համավարակից առաջ չեն ունեցել գրանցված աշխատանք:

Մեպտեմբերի 14-ին Հետք.ամ-ը հաղորդեց, որ ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տաթևիկ Ստեփանյանը վճիռ է կայացրել բավարարել երկրի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկություններից մեկի՝ ՌՌԻՍԱԼ Արմենիա ՓԲԸ-ի շուրջ 100 աշխատակիցների հայցը, որով նրանց ենթակա է վճարման 717 միլիոն ՀՀ դրամ (1.5 միլիոն ԱՄՆ դոլար) որպես 2007-2019թթ.նրանց կատարած արտաժամյա աշխատանքի վարձատրություն: Աշխատողներին ներկայացնող փաստաբանն ասել էր, որ նրանք օրական աշխատել են 12 ժամ և ունեցել են ընդամենը մեկ 57-րոպեանոց ընդմիջում:

Մեպտեմբերի 15-ին Հետք.ամ-ը հրապարակեց ծանր վնասվածքներ ստացած էլեկտրիկ Վաչագան Նալբանդյանի պատմությունը, որն էլեկտրաստանի վրա աշխատելիս 26 ֆուտ բարձրությունից ընկել էր, ապա բախվել ամբարձչին, որն էլ կոտրվել ընկել է նրա վրա: Ըստ այդ հրապարակման նրա գործատուն (ռուսաստանաբնակ գործարար Սամվել Կարապետյանին և նրա ընտանիքին պատկանող «Տաշիր կապիտալ գրուպի» կազմում գործող «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ) հրաժարվել էր հոգալ Նալբանդյանի անհետաձգելի վիրահատության ծախսերը՝ նշելով, որ սպասում են փորձագիտական եզրակացության և իրենք որևէ պատասխանատվություն չեն կրում ամբարձչի համար, որը պատկանում էր մեկ այլ անձի:

Շատ ոլորտներում անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին: Ըստ հունվարի 17-ի Հետք.ամ-ի հաղորդման 2017-2019թթ. գրանցվել է մահվան ելքով 39 աշխատանքային պատահար: Ըստ այդ հաղորդման աշխատանքային պատահարների գերակշիռ մասն արձանագրվել է Սյունիքի մարզի բաց հանքերում, իսկ պատահարների թվով երկրորդ տեղը զբաղեցնում է վերամշակող

արդյունաբերությունը: Հաշվի առնելով երկրում տիրող գործազրկության բարձր մակարդակը՝ աշխատողները սովորաբար չեն թողնում այնպիսի աշխատանքները, որտեղ առողջության կամ անվտանգության համար վտանգավոր իրավիճակներ կան: Նման իրավիճակներում համապատասխան մարմինների կողմից աշխատողներին պաշտպանություն չի ապահովվում, իսկ վերջիններս էլ սովորաբար իրենց իրավունքների խախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում:

ԱՄՏՄ լիազորությունների սահմանափակումներով ու տեսուչների դեռևս սահմանափակ թվով պայմանավորված՝ տեսչական ստուգումները համապատասխանության երաշխավորման մասով շարունակում են մնալ ոչ բավարար: Տեսուչներին վերապահված չէ անսպասելի ստուգումներ անցկացնելու իրավասություն:

Հունիսի 22-ին ՄԻՊ գրասենյակը 2019թ. աշխատանքային իրավունքների հարցերով իրենց հասցեագրված բողոքների բնույթի վերաբերյալ տեղեկանք ներկայացրեց: Վերհանված խնդիրները ներառում էին. վերջնահաշվարկի չիրականացում աշխատանքից ազատվող աշխատողների հետ, աշխատանքից անհիմն ազատումներ, աշխատողներին կարգապահական տույժերի ենթարկելու կարգի չպահպանում գործատուի կողմից, փոխադրում այլ աշխատանքի՝ առանց աշխատողի համաձայնության: ՄԻՊ գրասենյակը տարածված և համակարգային խնդիրներից առանձնացրել էր աշխատանքի ընդունվելիս աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելը, աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը, կատարած արտաժամյա աշխատանքի համար աշխատողին չվարձատրելը: Հունիսի 24-ին հրապարակված իր զեկույցում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2019թ. աշխատանքային իրավունքների շուրջ իր մշտադիտարկման արդյունքում նույնպես նմանատիպ խնդիրներ էր արձանագրել:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված շատ տնտեսավարողներ ապրիլին դադարեցրեցին իրենց աշխատանքը և միայն մայիսի սկզբներից սկսեցին աստիճանաբար վերաբացվել: Առողջապահական, անվտանգության և հակահամաճարակային վերահսկողության շրջանակում խնդիրները դիտարկվում էին թե՛ աշխատողների, թե՛ տվյալ բիզնեսի հաճախորդների տեսանկյունից: Հակահամաճարակային կանոնները չպահպանելու համար բազմաթիվ տնտեսավարողներ տեսուչների պահանջով մի քանի օրով փակվել են: